

ԼՈՅՍ

ՕԾՅ՝ ԻձձՁՅ՝ ԸԿՄ
 »Օ
 ՌՅ՝ ԷՅ՝ ՌՅ՝ ԻՅ՝ ԻՅ՝ ԿՅ՝
 »ՌՅ՝ ԲՅ՝ ԹՅ՝ ԹՅ՝ ՌՅ՝

Ձ՝ ՌՅ՝ ԸՅ՝ ԻՅ՝ ՆՅ՝ »Օ՝ · ԹՅ՝ ձձձ
 ԷՅ՝ ԹՅ՝ · ԸՅ՝

Յ՝ ԸՅ՝ ԹՅ՝ ԷՅ՝ ՌՅ՝ ԿՅ՝

Օ՝ ԸՅ՝ ԻՅ՝ ՌՅ՝ ՆՅ՝ ԸՅ՝ ՌՅ՝
 1 5 1 7 5 - 1 1 7
 ԹՅ՝ ՌՅ՝ ԿՅ՝ - ԹՅ՝ ԿՅ՝

ԹՅ՝ ԸՅ՝ ԷՅ՝ ԸՅ՝ 6 4 9 5 1 8 0

E-mail : louys@dpir.com

Համար 5
 31 Մայիսի , 2000թ.

Գինը՝ 3000 ռիալ

LOUYS

Armenian Cultural
 and Social Biweekly

No. 5 , 31 May, 2000

Editor-in-Chief
 Ed. Baghdasarian

POBox 15175-117
 Tehran - Iran
 Tel. (0098 - 21) 6495180

՝ ԸՅ՝ ԿՅ՝ ԻձձՁՅ՝

- Ֆիդայական շարժում.....2-3
- Լուրեր.....4-8
- Հարցազրոյց դոկտ. Հարմիկ Դաւթեանի հետ.....9-10
- Հայաստանի Խորհրդարանը11-12
- Ապրիլեան Խոհեր.....13
- Թատրոն.....14-15
- Գրական էջ16-19
- Առողջապահական20
- Մարզական21
- Ժամանց22-23

ԸՅ՝ ՌՅ՝ »ՌՅ՝ ԿՅ՝ ԸՅ՝

Խմբագրական	1
Ամփոփ լուրեր	2-6
Արաբական աշխարհը և «Հայկական հարցը»	7-8
Գիքոր	9

فهرست بخش فارسی

1	سرمقاله
۲-۶	مرور اخبار
۷-۸	جهان عرب و مسئله ارمنی
۹	ادبیات - گیکور

Ճապիկի առաջին էջում՝

«Մայիսեան
 տօնակատարութիւն»
 Սարդարապատում

طرح روی جلد:

مراسم بزرگداشت
 حماسه های ماه مه
 در سردارآباد

ՁՅ՝ ՌՅ՝ ԸՅ՝ ՌՅ՝ ՆՅ՝ ԲՅ՝ ԻՅ՝ ԻձձՁՅ՝ ՌՅ՝

Թամար Փանոսեան, Աննա Սարգսեան, Ռուբիկ
 Սարգսեան, Լևոն Ահարոնեան, Ռոբերտ
 Վարդումեան, Վաչիկ Վարդանեան, Անդրանիկ
 Խէչումեան, Կարօ Սարգսեան, Ժորժ Ահարոնեան,
 Րոյ Ղազարեան, Անուշ Մելիքեան, Էդ. Գերմանիկ,
 Առլետ Վարդումեան, Վիօլէտ Քէշիշեան,
 Ռազմիկ Վելիշեան, Անդրանիկ Զաքարեան,
 Շահէն Յարութիւնեան, Սուսաննա Համբարձումեան
 Կիտուշ Արզուեան, Կ. Յովհաննիսեան, Անի Նազարեան

Ֆիդայական շարժում

Ֆիդայական շարժումը Արեւմտեան Հայաստանում 1890-ական թւականներին

Աննա Սարգսեան

19-րդ դարի հայ ազատագրական շարժումները իրենց բովանդակութեամբ եւ նպատակադրածութեամբ կապուած են եղել հայկական հարցի հետ, եւ հանդիսացել են 17-18-րդ դարերում սկսուած հայ ազգային-ազատագրական շարժումների շարունակութիւնը:

19-րդ դարի հայ ազգային-ազատագրական շարժումների կիզակէտը հանդիսացաւ Արեւմտեան Հայաստանը՝ իր գրեթէ բոլոր նահանգներով, գաւառներով ու քաղաքներով: Մինչ Սուլթան Համիդեան տարիները հայերի վիճակը փոքր ի շատ տանելի էր, առանձին տարածքներում նոյնիսկ անդորր, որի շնորհիւ հայ հոգեւոր կեանքը, մշակոյթը, կրթատեսակական օջախները վերածնունդ եւ ազգային զարթօնք ապրեցին: Սակայն Համիդեան բռնատիրութիւնից յետոյ օրէցօր անբերմտահայութեան վիճակը վատթարացաւ, դարձաւ օրհասական: Այս պայմաններում էր, որ արեւմտահայութիւնը գիտակցելով սկսեց ինքնապաշտպանական կոմիտեերը՝ պարզապէս սկսելով ազգային-ազատագրական պայքար, որն իր նպատակներով եւ խնդիրներով, տարածքի ու ժամանակի ընդգրկմամբ եզակի է հայ ժողովրդի պատմութեան մէջ, եզակի է նաեւ իր կրած կորուստներով, իր թափած արիւնով:

Մինչեւ 19-րդ դարի կեսերը Թուրքիան մնում էր որպէս ազարային Ֆեդոյալական երկիր՝ կախուած երոպական պետութիւններից, որտեղից կատարում էին ներմուծումներ: Յաճախ էր տնտեսութեան վարման մշակոյթը. եղածն էլ ստեղծում էր հայերի ձեռքով, որոնցից Թուրքիան քիչ օգուտ չի քաղել, քիչ բան չի սովորել: Արտաքին յարաբերութիւններում եւ առեւտրում ձեռներեցը հայն էր, արծաթագործն ու ոսկերիչը, դպրոցավարն ու բառարանագիրը, բարձր մտաւորականութեան սերունդը հայերն էին: Եթէ նախկինում այս ամէնը խրախուսում էր, ապա 19-րդ դարի վերջում Թուրքիան սկսեց ոչ միայն խեղ մայել հայերին, այլ այդ «անհանգիստ տարրը» երկրից դուրս վնդդելու ծրագիր մշակեց: Նրանք սկսեցին այնպիսի միջոցներ գործադրել, երկրի քաղաքական կարգն ու կանոնը այնպէս վերափոխել, որպէսզի հայերը հնարաւորութիւն չունենան երկրում առաջատար դեր խաղալու: Այս ամէնի հիմքում ընկած էր օսմանիզմի գաղափարախօսութիւնը՝ կայսրութեան ամբողջականութեան պահպանում, պետութեան թուլացման կանխում, այլազգիներին պետական դէկից հետացնելը եւ այլն: Սա քաղաքական ծրագիր էր, որ ձեռնարկել էր տակաւին 1865 թ. ստեղծուած «Նոր օսմանների

ընկերութիւնը», որի ժառանգորդը եղաւ երիտօրօքական կառավարութիւնը: Այս քաղաքականութեան կիրառումը դրդեց կայսրութեան քրիստոնէայ ժողովուրդներին ազգային-ազատագրական պայքարի: Վրայ հասաւ ողբերկական մի շրջան, երբ իր պատին ու իրաւունքը պաշտպանելու համար հայը ստիպուած էր զենքի դիմել: Սկսում էր մեր ժողովրդի համար ապրելու եւ յաղթելու պայքարի ազատագրական ժամանակաշրջանը: Արեւմտեան Հայաստանում ազատագրական շարժումները միատարր եւ միասնական չեն եղել թէ՛ ժամանակագրական եւ թէ՛ տարածքային առումով: Ժամանակագրական այն իմաստով, որ առանձին տարիներ դրանք մերթ բոլորել են, մերթ մի տեսակ հանգել, չունենալով նախորդ թափը եւ նպատակադիր խնդիրները: Ֆիդայական շարժումը հերոսական պայքար էր Օսմանեան կայսրութեան դէմ, որը ժամանակագրական առումով անցել է երեք փուլ՝ սկիզբ 1840-80-ական թւականներ, վերեւ՝ 1890-ական թւականներ, վայրէջք՝ 90-ականների վերջերից սկսած մինչեւ 1904-1905 թւականները: Հայոց Ֆիդայական շարժման կիզակէտը հանդիսացան 1894 թ. Սասունի հերոսական ինքնապաշտպանութիւնը, 1895-96 թթ. Ձէյթունի յաղթական ապստամբութիւնը, Վանի 1896-ի հերոսամարտը, որոնք նոր որակ յաղորդեցին հայկական հարցին: Ե՛ւ սուլթանը, ե՛ւ երոպական պետութիւնները ստիպուած էին հաշի մտել այն փաստի հետ, որ գործ ունեն ոչ միայն մորթող հարիւր հազարաւոր քրիստոնէայ բազմութեան, այլ սեփական կեանքի, պատիւի եւ ազատութեան համար պայքարող ազգի հետ: Հայկական ազատամարտը եւ դրան զուգահեռ ընթացող սարսափելի կոտորածը անխուսափելիօրէն հանգեցրեցին Օսմանեան կայսրութեան արտաքին եւ ներքին ճգնաժամի:

Ֆիդայի արաբերէն բառ է, այն նշանակում է յետիոտն, որը այս իր բուն իմաստով գրեթէ համընկնում է հայերէն համարժեքին, քանի որ հայ Ֆիդայիները ըմբոստ, մահը ստրուկ ապրելուց զերազատող, անձ, ինչք, ընտանիք ու երջանկութիւն հասկացութիւնները ստորադասելով հայրենիքի եւ հարազատ ժողովրդի ազատութեանը: Նրանց տունն ու անկողինը լեռներն էին բարձր՝ չոր քարը:

1880-ական թւականները Ֆիդայական խմբերի ձեւաւորման տարիներն էին: Այդպիսի խմբեր ստեղծուեցին ամենուր՝ Սասունում, Վանում, Մուշում, Ձէյթունում, Ալաշկերտում, Էրզրումում, Բաղէշում եւ Կեսարիայում: 1880-ական թւականներին յաջորդեցին 1890-ական թւականները՝ Ֆիդայական խմբերի գործունէութեան վերելքի փուլը: Առաջին Ֆիդայիներն էին՝ Արաբօն, Լեւոնը, Միսն, Յունօն: Արաբօ... Գեորգ Զա-

Ֆիդայական շարժում

ուռը, այդ մեծ Ֆիդայայետը, երկիւղածօրէն էր շնջուում այդ անուռը, որի մասին առասպելներ էին հիւսել: Արաբօն աներետոյթ հրաշք էր, թուրքերի հոգեառը: Նրան փնտրում էին ամենուր, թէն ամենուրէք էր, սակայն նրան գտնել չէր յաջողուում: Նա դայրոցը կիսատ թողեց ու Ֆիդայի դարձաւ: Առաւօտեան նրան կարելի էր տեսնել Մուշում, իսկ երեկոյեան Սասունի լեռներում՝ ինչպէս արծիւր բարձունքներում թռած: Արաբօն Սասունում հայրուկային շարժման ռահիւրան էր, ժողովրդական անդրանիկ խմբի կազմակերպողն ու ղեկավարը, որի իսկական անունը Ա-նաքել էր: Նրա խումբը սկզբում կազմուած էր երեք հուզուց, այնուհետեւ այդ թիւը աճեց, նրա խմբի մէջ մտան Լեւոնից, Մխլից բացի, Գեորգ Չաուշը, Գալշոյի Մանուկը, Յովիկը, Բերդակցի Ներսօն, Ադամը, Ղարսեցի Հագեն եւ ուրիշներ: Փառաւոր Ֆիդայայետին արժանի ճանապարհ անցաւ Արաբօն եւ ողբերգական վախճան ունեցաւ: Նա զոհեց այն ժամանակ, երբ իր ցանած սերմերը ծիլ էին տալիս: Հայկական բնակավայրերից բոլորից շատ Սասունն ու Մուշը (Տարօն) գտնեցին հրկիզումների մէջ:

Տարօն եւ Սասուն գաւառներում ազատագրական եռուն պայքարը սկսուում է 1890-ական թականների սկզբից, երբ քուրդ բեկերը, զօրավիզ ունենալով թուրք բռնակալութեանը եւ կաշառելով՝ ամէն ձեւի վատութիւն արեցին հայերին: Օրատուր լկտիանում էին քրդերը, աւելի մեծ հարկեր ու պահանջներ դնելով հայ տեղաբնակների առաջ: Նրանք եթէ մինչեւ 1880-ական թականներին լեռնաբնակ վայրի խաշմարածներ էին, դրանից յետոյ սկսեցին իջնել դաշտային մասերը, ուր բնակուում էին հայերը: Ճնշումն աւելի սաստկացաւ. հայրեր սկսեցին բռնել գաղթի ճանապարհը: 1890-ից յետոյ գաղթականութիւնը ընդհանուր երեւոյթ դարձաւ: Հարկատու էր միջոցներ փնտրել՝ ուժի դիմել: Հայոց վարժարաններում սկսեցին գաղտնի զինավարժութիւններ, որոնց հայ պատանիներն ու երիտասարդները բարձր զիտակցութեամբ էին մասնակցում: Հասկանալի է, նրանց համար եւս ամէն ինչ պարզ էր:

Տարօն-Սասունը 1892-93 թթ. ճգնաժամ էին ապրում: Մուլթան Համիդը կազմակերպելով քուրդ «համիդի» զնդեր՝ ամէն կերպ ձգտում էր վերջ դնել հայկական խնդրին: Այս զնդերը սկսեցին թալանել, աւերել հայկական գիւղերը, բռնաբարել կանանց ու աղջիկներին:

Արեւմտահայութեան ազգային- ազատագրական պայքարի պատմութեան մէջ առանձնակի նշանակութիւն ունի Սասունի 1894 թ. հերոսամարտը, որը ընդգրկեց մօտ 35 հազար բնակչութեամբ շուրջ մէկ տասնեակի հասնող մեծ ու փոքր բնակավայրեր: Սասունը դարձել էր ռազմական ճամբար. նրա դէմ նետուել էին թուրքական ամենակատարեալ զինորդական միաւորումները եւ քրդական «համիդի» պատժիչ ջոկատները: Գնալով դրութիւնը բարդանում էր. 1894 թ. օգոստոսին թուրքերը յարձակման անցան: Սկսեց Սասունի գոյամարտը, սակայն ուժերի անհասարկ պայմաններում: Թշնամին նորանոր համարումներ էր

ստանում: Շուրջ 15 օր տեւեց անհասարկ գոտեմարտը, որին մասնակցում էին ծերերն ու պատանիները, նոյնիսկ կանայք ու դեռատի աղջիկները: Սկսեցին ձեռքակալումները. խիզախ Ֆիդայիներից շատերը՝ Գեորգ Չաուշը, Մուրադը, եւ ուրիշներ շրթայակապ տարեցին Մուշ: Աւերեց Սասունը, զոհեցին աւելի քան 10 հազար մարդ, հրդեհի ճարակ դարձաւ 40 գիւղ:

Սասունի դէպքերը լայն արձագանք ստացան ոչ միայն Արեւմտեան Հայաստանում, այլեւ միջազգային հասարակական շրջաններում: 1895 -ին եւրոպական երկրների դիտորդների կողմից հայկական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու վերաբերեալ ծրագրեր ներկայացրեցին Թուրքիայի կառավարութեանը, որոնք յայտնի են «Բարենորոգումների մայիսեան ծրագիր» անունով:

Սասունում կային զինուած խմբեր, դրանք ղեկավարում էին՝ Դժոխք Հրայրը, Անդրանիկը, Սպաղանց Մակարը, Աղբիւր Մերոքը: 1897-ին թուրքերին սարսափի մէջ էր պահում Աղբիւր Մերոքը, որը, սակայն, դառնում է դաւաճանութեան զոհ: 1899 -ի հոկտեմբերին Մերոքը սպանուում է իր երկու եղբայրների եւ զաւակի հետ: Նրա քաջարի կինը՝ Սօսէն, գերի է վերցուում: Մերոքի գլուխը Սօսէի ուղեկցութեամբ ուղարկուում է Բաղէշի կուսակալին՝ որպէս նւեր, ապա յանձնուում հայոց Առաջնորդարանին, որը մեծ հանդիսութեամբ եւ կսկիծով թաղում է Կամարակի վանքի շրջակայքում, իսկ մարմինը թաղեց Ս.Կարապետ վանքի շրջակայքում: Ինքնապաշտպանական խմբերի գործունէութիւնը Սասունում, Տարօնում, Ալալաթում, Բիթլիսում փրկարար դէր խաղացին 1890-ական թականների համիդեան կոտորածների օրերին: Միայն այսպէս սկըւեց եւ օրատուր ծաւալեց ու լայն թափ ստացաւ հայազատագրական շարժումը, որը այնուհետեւ ընդգրկեց ողջ Արեւմտեան Հայաստանը, իր մէջ առնելով հարիւր հազարաւոր հայրենասէր զաւակներ՝ Արաբօից, Մերոքից, Դժոխք Հրայրից, Մուրադից, Նիկոլ Դումանից Արամից սկսած մինչեւ վերջին վրիժառու հայրուկը:

Ի դէպ Արեւմտեան Հայաստանի Ֆիդայական շարժման թափը խանդավառել էր նաեւ արտերկրի եւ Արեւելեան Հայաստանի հայերին: Կամաւորներ էին գալիս Ռուսաստանից, Արեւելեան Հայաստանից, Կովկասից, Պարսկաստանից, Յունաստանից եւ այլ վայրերից:

Հայ ժողովրդի նորագոյն շրջանի պատմութեան մէջ ոսկէ տառերով են գրուած հայ Ֆիդայիների, մասնաւորապէս նրանց անձնուրաց ղեկավարների՝ Արաբօի, Աղբիւր Մերոքի, Անդրանիկի, Գեորգ Չաուշի, Դժոխք Հրայրի, Սարգիս Կուկունեանի, Բեռիի, Եփրեմ Խանի, Միհրան Տամատեանի, Արամի, Համբարձում Պոյաճեանի եւ շատ-շատերի անունները, որոնք իրենց քաջագործութիւններով, պանծալի զաւակների օրհնակով, մկրտուել են անթիւ խիզախութիւնների դարբնացում:



ԱԷ՞՞Յ՞ Ն՞՞ ՍԾ՞՞ Ս՞՞ ՕՂ՞՞

Տիկնիկային Թատրոն «Ա-հարոնեան» մանկապարտզում.- Մայիսի 10-ին Էջմիածնի դրամատիկական թատրոնի դերասանները Մաջիդի թաղամասի «Ահարոնեան» մանկապարտզի երեխաների համար ցուցադրեցին Միխայիլ Գարեանովի «Մեղրաբլիթ տնակը» տիկնիկային ներկայացումը: Երեխաները դիտում էին զարմանալի հետաքրքրություններ և մանկական անկեղծությամբ, չէին քաքցում իրենց բացայայտ սերը բարի հերոսների և ատելությունը չար կախարդի ու սատանայի նկատմամբ: Իսկ վերջում երեխաները իրենց բարձրակարգ շնորհակալություն մեջ արտայայտեցին մեծ ուրախություն և գոհունակություն:

Մանկապարտզի աշխատողների անունից դերասաններին շնորհակալական խօսք ասաց նաև դպրոցի տեսուչ Անետ Բաղդասարեանը: Ներկայացումից յետոյ մենք փորձեցինք երեխաներից հարցնել, թե նրանց, ո՞ր տիկնիկներն են դուր եկել: Աֆին՝ Մովսիսեանը ասաց աղջիկը (Մարոն), Արմեն Անդրիասեանին շնիկն էր դուր եկել, Նարեմ ասաց՝ բոլորը, իսկ երեխաներից մեկը պարզապես ասաց՝ «Էն մոքորը, որ բարձրախոսով խօսում էր» (Ի նկատի ունե՞ր հեթիաթածին՝ օր. Գրետա Ղազարեանին):

Սկսեցին կենտրոնական ընտրական Ցանձնախմբի նիստերը.- Մայիսի 21-ին տեղի ունեցավ Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական Ժողովի ընտրական Ցանձնախմբի երկրորդ նիստը, որի ժամանակ ընտրեցին տարբեր ենթակայ յանձնախմբեր, դրանք պետք է կատարեն որոշ ուսումնասիրություններ և առաջարկություններ և ներկայացնեն Կենտրոնական Ցանձնախմբին: Որոշուեց 12-րդ շրջանի Պատգամաւորական Ժողովի ընտրությունները անց կացնել 2000 թ. հուլիսի 20-ին: ԿԸՅ-ի նիստերը գումարելու են իրաքանչիւր կիրակի: Կիրակի մայիսի 13-ին տեղի ունեցավ, Թեմական Խորհրդի կողմից կեանքի կոչած, 12-րդ Պատգամաւորական Ժողովի Կենտրոնական

Ցանձնախմբի՝ առաջին նիստը: Այդ նիստին բացի 11 անդամներից, ներկայ էին նաև Թ.Խ.-ի փոխատենապետ պրն. Ռուբիկ Կարապետեանը, ՊԺ-ի դիւանի նախագահ Դոկտ. Հարմիկ Դաթեանը և մի քանի պատգամաւորներ: Քննարկեցին տարբեր հարցեր, ընտրեց պրն. Թոմիկ Սարուխանեանը որպէս նախագահ և պրն. Գուրգէն Աբուսիմ որպէս փոխնախագահ: Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշուեց անդամներին տրամադրել ներքին ծրագիրը կանոնագիրը և բոլոր այն տեսլներ, որոնք վերաբերում են Պատգամաւորական Ժողովի ընտրություններին:

Թեհրանի Թեմական Խորհուրդը և ԻԱՄՍ-ն (Իրանահայ Ազգային և Մշակութային Միութիւն) հանդիպեցին միմեանց.- 2000 թ. մայիսի սկզբին ԻԱՄՍ-ի դիմումի համաձայն և Թեմական Խորհրդի ընդառաջութեամբ այս հանդիպումը տեղի ունեցավ: Քննարկեցին տարբեր հարցեր, խօսեցին անցեալի վերաբերեալ տարբեր հարցերի շուրջ, ԻԱՄՍ-ն շեշտեց, որ դեռ իրենք հաւատացած են, համայնքի երեք թեմերը, որոնք բռնի ձեռով՝ Շահի օրօք, անջատել են Էջմիածնից, պետք է միանաւ կրկին Էջմիածնին: Նրանք քննադատեցին նաև Թեմական Խորհրդի միակողմանի մօտեցումները և յոյս յայտնեցին, որ երեւի շուտով վերջ կը դրի այդ վնասաբեր մօտեցմանը, նշեցին նաև, որ իրենք կողմնակից են նոր ուղղափոխութեանը: Թեմական Խորհուրդը ևս իր հեթիմ արեց իր քննադատությունները, ընդ որում կարելի է նշել այն, որ ԻԱՄՍ-ն ըստ նրանց չի համազործակցել կամ չի ընդունել Ազգային կառոյցը՝ Առաջնորդարանը, և բոյկոտի է ենթարկել այդ կառոյցի տարած աշխատանքները: ԻԱՄՍ-ն այն կարծիքին է, որ միշտ էլ կառոյցն ընդունել է, բայց ապօրինի են եղել 11-րդ շրջանի Պատգամաւորական Ժողովի ընտրությունները և այդ իսկ պատճառով էլ նման վերաբերմունք է ցոյց տուել, այլ ոչ թէ դէմ է եղել ընդհանրապէս Ազգային կառոյցին: Հանդիպումն ընթացաւ ջերմ բարեկամական մթնոլորտում և նրանք հաւաստեցին, որ արդէն որպէս կողմեր չպետք է հանդես գալ, այս

բոլորը միասին պետք է ընդգրկեն Ազգային կառոյցի մէջ: Նման հանդիպումների կայացումը օգտաւետ է համարել այն առումով, որ վերանում է կասկածանքի ու անվստահութեան մթնոլորտը:

Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի (Գերլիսանսի և Դոկտորայի) շրջանաւարտների



նիստը երեկոյ.- Մայիսի 19-ին «Հայ Ակումբի» սրահում տեղի ունեցաւ Դաւիթ Անյաղթի անուն բարձրագոյն կրթութիւն ունեցող շրջանաւարտների գնահատման երեկոյ: Այն կազմակերպել էին Հայ Համալսարանականների Ընդհանուր Միութիւնը և Թեհրանի Հասարակական Միութիւնը: Չեմարկած երկույի ընթացքում ոսկէ շքանշաններով գնահատեցին երեք դոկտորայի շրջանաւարտներ, արծաթէ շքանշաններով՝ ինը գերլիսանս ստացած շրջանաւարտներ և տասնչորս գերլիսանսի ուսանողներ: Նախ բացման խօսքով հանդես եկաւ Անահիտ Դուկասեանը: Նա ասաց, որ վստահաբար բարձրագոյն ուսման ուսանողների և շրջանաւարտների թիւը անելին կարող է լինել, բայց, ցուց, յաջողուել է միայն դրանցից 27 հոգուն ի մի բերել: Ապա Արեւտ Բոչարեանը ներկայացրեց Դաւիթ Անյաղթի կենսագրութիւնը, որից յետոյ որպէս օրայ բանախօս, ելոյթ ունեցաւ Այիդա Յովհաննիսեանը: Նա շնորհակալական խօսքեր յղելուց յետոյ, ներկայացրեց մի դասախօսութիւն, որը իր ցանկութեամբ նա անուանեց որպէս զրոյց. ըստ նրա զրոյց ասելով, անելի դիւրին է դառնում խօսելը, մտքերի փոխանակումը: Նրա զրոյցի թեման էր՝ գիտութեան և բարոյականութեան փոխյարաբերութիւնները: Նա ասաց. «Մենք մասնա-



գիտանալով չենք դադարում մարդ լինելուց: Առաջին հերթին մենք պետք է մեր մարդկային խղճի առաջ պատասխան տանք եւ յետոյ միայն մեր մասնագիտութեան»: Նա նաեւ նշեց, որ գիտութիւնը պետք է ծառայի մարդուն, այլ ոչ թէ մարդը ծառայի գիտութեանը: «Ուրեմն ամէն մէկս ինքներս մեզանից ամաչելու ուժը եւ կարողութիւնը ունենաք եւ մարդուն դնենք բարձր պատանդանի վրայ»: Կազմակերպած երեկոյի վերջում իր խօսքն ասաց նաեւ Թեհրանի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Սեպուհ Մարգարեանը: Նա ասաց, որ գիտութիւնը եւ յանձնած վկայականները արժէք ունեն միայն այն ժամանակ երբ դրանք ուղղած լինեն ծառայելու ողջ հայութեան շահերին, եւ մեր պահանջատիրական իրաւունքների ձեռք բերման յաջողութեանը: Իսկ եթէ դրանք միայն զարդարանք հանդիսանան գրասենեակների համար, կամ ամուսնների համար, որպէս տիտղոս, ապա դրանք իրենց ամբողջական լիարժէք մասը չեն ունենայ ձեր կեանքում: Ծրագրի ասարտին իրենց երախտագիտական խօսքը՝ ծնողներին, ուսուցիչներին, դասախօսներին, յղեց գերլիսանսի շրջանաւարտ՝ Գոլ-



ամիրեան Գրիգորը: Հարկ է համարում նշել, որ ծրագիրը ունեցանաւ իր գեղարուեստական բաժինը, որի ընթացքում ելոյթ ունեցան հենց իրենք՝ շրջանաւարտներն ու ուսանողները:

Խորհրդածողով Իրանի Քաղաքակրթութիւնների երկխօսութեան միջազգային կենտրոնում. Մայիսի 21-ին վերոյիշեալ հաստատութիւնում տեղի ունացաւ մի խորհրդածողով, որի օրակարգում դրւած էր Իրանահայ նշանաւոր դեմքերի ներկայացման խնդիրը: Այս նըպատակով հրաւիրուել էին հայկական միութիւնները եւ մատուցել: Դրանց շարքում էին Հ.Հ.Ը.Միութիւնը, Հ.ՈՒ.Մ.Կ.Պ, Հուր միութիւնը, Հայ Կին միութիւնը, ԻԱՄՄ միութիւնը, Միփան միութիւնը, Հ.Ճ.միութիւնը, Հ.Մ.Արարատ կազմակերպութիւնը, Նոր Զուրայի Թեմական Խորհրդի ներկայացուցիչը, Ալիք օրաթերթը եւ այլն: Ուրշուեց հրատարակել վերոյիշեալ խորագրով մի գիրք, որը բաղկացած կը լինի 350 էջից:

Ցաւօք, ինչպէս արդէն սովորութիւն է դարձել ակնաթող անել «Որոշներին»՝ չէր հրաւիրուել «Լոյս»-ը :Այս լուրը մեզ փոխանցեց տոյն հանդիպման հրաւիրեալներից մէկը :



եղարուեստական ձեռնարկ «Իրան Փիրուզ» դպրոցում. Մոյն թականի մայիսի 11-ին Թեհրանի հայոց ազգային «Իրան Փիրուզ» դպրոցում գեղարուեստական ձեռնարկ էր կազմակերպուել՝ նկիրւած հայ մեծամուն բանաստեղծ Յ.Թումանեանին: Նախ քացման խօսքով հանդէս եկաւ նոյն դպրոցի տեսչուհի՝ տիկ. Արտեմիս Մկրտչեանը: Այնուհետեւ դպրոցի աշակերտուհիներն ասմունքեցին մեծ բանաստեղծի ստեղծագործութիւնները: Մերք ընդ մերթ ելոյթ ունեցաւ տիկ. Իւետ

Հախերդեանը, որը Յ.Թումանեանի պոեմներից որոշ հատուածներ էր ներկայացնում: Ապա բեմադրեց Յ.Թումանեանի՝ «Բզեզի դպրոցը» տիկնիկային ներկայացումը:

Թղթակից՝ Անի Նազարեան

Բն՝ 3 Կ

Սօտ ապագայում Հայաստանի Իրան՝ Երոպայից Իրան 3000 տոննա բեռ կը փոխադրուի. Այս փոխադրման հետաւանքով, տարանցիկ բեռնափոխադրումների ծաւալը մի քանի անգամ կը գերազանցուի: Ըստ ՊՓԲԸ (պետական փակ քաժնետիրական ընկերութիւն) գործադիր տնօրէն Արտակ Դաւթեանի՝ բեռնափոխադրման մնան ծրագրի շնորհիւ, Սեւ Ծովից կապ կը հաստատուի Պարսից Ծոցի հետ, ուր տարանցիկ սակագները հասնում են միջազգային չափանիշների: Այս ծրագիրը նախատեսւած է իրականացնել մինչեւ տարւայ վերջ: Ա. Դաւթեանը նշեց նաեւ, որ Թուրքիայում եղած բարձր մաքսավճարների հետեւանքով բեռների փոխադրումը ձեռնադառն է: Եւ մնան ծրագիրը նպատակայարմար է իրագործել հետաւեալ կերպով՝ Երոպայից բեռը հասցնել Փոթի նաւահանգիստ, այնտեղից Հայաստան եւ ապա՝ Պարսից Ծոցից Բանդար Աբբաս նաւահանգիստ: Տեսալ պրոցեսը կը տեւի 15 օր:

Իրան - Հայաստան զազատար խորովակը. (Բայան Օրաթերթ 8/5/2000): Ճապոնական «Միտսուրիշի» ընկերութիւնը ուսումնասիրում է Իրան-Հայաստան զազատար խորովակի կառուցման հարցը: Հայաստանում բանակցութիւններ են տեղի ունեցել արտասահմանեան որոշ ընկերութիւնների հետ և կազմուել է մի կոնցեպցիա: Իրանի, Հայաստանի ներկայացուցիչների ու «Միտսուրիշի» ընկերութեան որոշ ղեկավարների միջեւ տեղի են ունեցել բանակցութիւններ, որոնց ընթացքում բացատրուել են որոշ հարցեր բիւրջէյի և մի շարք այլ խնդիրների վերաբերեալ: Այս զազատար խորովակը 140 կիլոմետր երկարութիւն է ունենալու, տարեկան մէկ միլիարդ մետր խորանարդ զազ պէտք է Իրանից

բաց թողնի Հայաստան: Այս ծրագրի իրականացումը պահանջում է 120 միլիոն դոլար:

Անձանը բեճզինի օրական սպառումը 47 միլիոն լիտր կը լինի.- (Իրան օրաթերթ 4/5/00): Այս տարւայ բեճզինի սպառումը 8 տոկոսով աւելացել է: Իրանի նաւթային արտադրութեան ազգային ընկերութեան գլխաւոր տնօրէն պրն. Աղաբաբային գտնում է, որ բեճզինի մեծածաւալ սպառման պատճառներից մէկը նրա մատչելի գինն է:

Ադրբեջանի Հանրապետութիւնում արտադրելու է Իրանական հանրակառք.- (Բայան օրաթերթ 4/5/2000): «Իրան Խողրո» ընկերութեան ներկայացուցչութեան նախագահ պրն. Մոհամադ Խալիլ Շոջային, այս լուրը հաղորդելով, նշեց նաեւ, որ ապագայ երկու ամսւայ ընթացքում որոշ պայմանագրեր կը ստորագրեն: Այս ծրագրի իրականացմամբ 1200 աշխատատեղի կը ստեղծի:

Իրանում աշխատում են 110 կուսակցութիւններ և կազմակերպութիւններ.- (Իրան օրաթերթ 4/5/2000): Իրանի քաղաքապետարանի քաղաքական բաժնի ղեկավարը յայտնել է, որ Իրանում գըրանցել են 110 պաշտօնական կուսակցութիւններ ու կազմակերպութիւններ: Պրն. Մոհամադ Ջաւադ Հաղշենասը տեղեկացրեց, որ դրանց թիւը երկու տարի առաջ 36-ի էր հասնում:

Ադրբեջաներէն լեզուի դաստանդումը Թաւրիզի համալսարանում.- (Ազար Փայան օրաթերթ 16/3/2000): Դոկտ. Մեղիդի ջանքերի շնորհիւ, թոյլատուքիւն է ձեռք բերել Թաւրիզի համալսարանում ադրբեջաներէն լեզուի դաստանդման: Ուսանողների կողմից այս ծրագիրը դրական վերաբերմունքի արժանացաւ: Յաջորդ ուսումնական տարւայ համար պէտք է մշակուի յատուկ նոր ծրագիր:

Իրանը շուտով երկու նոր արբանեակ է ձեռք բերելու.- (Իրան օրաթերթ 6/5/2000): Արդէն Իրանում սկսել է երկու փոքր հաղորդակցական արբանեակի ստեղծման գործընթացը: Իրանի փոս-

տահեախօսային նախարարութեան նախարար՝ պրն Մոհամադ Ռեզա ԱրէՇը յայտնել է, որ առա-



ջինը Իրանին է յանձնուելու Ռուսաստանի բարձրագոյն կրթութեան և գիտութեան նախարարութեան կողմից, իսկ երկրորդը՝ սահմանակից 8 երկրների համագործակցութեամբ: Մինչև երկու ամիս այս գործը կը հասնի իր աւարտին:

Արտաքին ուժերի միջամտութիւնը Կովկասում՝ այդ տարածաշրջանը ապակայունացնելու նպատակով.- (Մոջաբեթաթ օրաթերթ 26/4/2000): Իրանի և Ռուսաստանի արտգործնախարարները խորհրդակցութիւն ունեցան: Պրն. Խարազին և Իւանովը մեծ կարևորութիւն տւեցին երկու երկրների միջև բարձր մակարդակի վրայ տեղի ունեցած հանդիպումներին, ու դրանց ընթացքում կոմիտեների ստեղծմանը: Պրն. Խառազին, անդրադառնալով Կովկասի տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձութիւններին, նշել է, որ արտաքին ուժերի միջամտութիւնը այս տարածաշրջանում՝ անկայունութիւն հաստատելն է: Նրանք այդ շրջանի կայունութեան հաստատման համար որոշ բանակցութիւններ են վարել:

1378 քականին (1999 թ.) 105 միլիոն օրինակ գիրք է հրատարակել Իրանում.- (Իրան օրաթերթ 6/5/2000): Իրանի մշակութի եւ առազնորութեան նախարարի տեղակալ պրն. Մասջէդ Ջամէին յայտնել է, որ իրանական 1378 քականին 20000 տեսակ գիրք՝ 105 միլիոն տպագրանակով հրատարակել է Իրանում:

ՃՅ ԽՅ Էİ 3 Կ

Անդրանիկ Մարգարեանը ՀՀ վարչապետ նշանակւեց.- (Ազգ. Հեռու. 12/5/2000): Մայիսի 12-ին ՀՀ

նախագահ Ռոբերտ Քոչարեանի հրամանով՝ Անդրանիկ Մարգարեանը ստանձնեց ՀՀ վարչապետի պաշտօնը, նա Հայաստանի «Հանրապետական կուսակցութեան» եւ «Միասնութիւն» դաշինքի ղեկավարն է: Անդրանիկ Մարգարեանը ծնել է 1951 թ.-ին Երևան քաղաքում, ուսուցիչների ընտանիքում: 1967 թ.-ին աւարտել է համար 3 դպրոցը, ապա ընդունել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբերնետիկայի Ֆակուլտետ: 1972 թ.-ին աւարտել է ինստիտուտը ստանձնելով՝ հաշիչ մեքենաների ինժեների որակագրում: Մինչև 1990 թ.-ը աշխատել է որոշ գիտահետազոտական կենտրոններում: 1990-93 թթ.-ին աշխատել է յատուկ ծրագրերի վարչութիւնում՝ որպէս բաժնի վարիչ: 1995-99 թթ.-ին եղել է Ազգային Ժողովի առաջին գումարման պատգամատր: 1999 թ.-ին կրկին ընտրւել է Ազգային Ժողովի պատգամատր: Ներկայում Միասնութեան խըմբակցութեան ղեկավարն է: Քաղաքական գործունեութեամբ զբաղւել է 1965 թ.-ից: 1968 թ.-ից եղել է ընդատակում՝ գործաց Ազգային Միացեալ կուսակցութեան անդամ: 1974 թ.-ին ձերբակալւել է, եւ դատապարտւել երկու տարւայ ազատազրկման: 1992 թ.-ից Հայաստանի Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) անդամ է՝ ՀՀԿ խորհրդի անդամ: 1993-97 թթ.-ին ՀՀԿ խորհրդի նախագահ, 1997 թ.-ից ՀՀԿ նախագահ: Ամուսնացած է, ունի 3 զաւակ:



Հանրաքիտ Հայաստանը Ռուսաստան-Քելառուս միութեանը անդամակցելու համար.- (Համաշխարհի օրաթերթ 11/5/2000): ՀՀ կոմունիստական կուսակցութեան առաջին քարտուղար Վլադիմիր Դարբինեանը ասել է, որ այս կուսակցութեան անդամները ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանից պահանջել են, որպէսզի այդ միացման վերաբերեալ հանրաքիտ անցկացուի: Վ.Դարբին-

եանը տեղեկացրել է, որ այն հայ պաշտօնեանները, որոնք միացման գաղափարին կողմնակից լինեն, աշխատանքից կը հեռացնեն, այնինչ բնակչության 90 տոկոսը կողմ է այդ միացմանը: Կոմկուսի առաջին քարտուղարը յայտնել է, որ իր կարծիքով Ղարաբաղի բնակչության 100 տոկոսը կողմ կը լինի այս միացմանը:

Հայկական հարցերի հաստատության տնօրէն՝ Էդարդ Յովհաննեսանի խօսքը մայիսի 1-ի առթիւ.- (Ազգ. Հեռ. 1/5/00): Հաւանաբար աշխարհում չկայ ոչ մի ուրիշ գաղափարախօսութիւն, որը այդքան տարածուած և միաժամանակ այդքան տարբեր լինի: Սա ընկերավարութիւնն է կամ այսպէս կոչուած սոցիալիզմը: Հ.Յ.Բ.-ի համար սոցիալիզմը և ընկերավարութիւնը հասարակական արդարութեան գաղափարախօսութիւնն է և, այդ իմաստով այսօրայ տօնը՝ մայիսի 1-ը, սոցիալիստների տօնն է, որը տարօրինակ ձեւով սոցիալ-դեմոկրատիայից ծնուած կոմունիստական գաղափարախօսութիւնը, իրեն վերագրեց սոցիալիզմի գաղափարը:

ՀՀ նոր վարչապետ Անդրանիկ Մարգարեանի շնորհակալական խօսքը.- (Ազգ. Հեռու. 13/5/00): Շնորհակալ եմ հանրապետութեան նախագահից, շնորհակալ եմ հանրապետական կուսակցութիւնից՝ ինձ աջակցելու՝ համար այս դժար պայմաններում նման պատասխանատու պաշտօնը ինձ վստահելու և աստարելու գործում: Մենք պէտք է փորձենք հաշի մտով իրականութեան հետ: Արդէն մի քանի ամիս շարունակող ներքաղաքական ճգնաժամից և անստահութեան մթնոլորտից բոլորս յոգնել ենք: Այս նոր կառավարութիւնը լինելու է Վազգէն Մարգարեանի և Արամ Մարգարեանի կառավարութիւնների գործունէութեան ժառանգորդը: Ինչպէս գործը սկսել ենք, այնպէս էլ պէտք է հասցնենք իր արարտին:

Արմէն Խաչատրեան՝ Առանց 27-ի գործի բացալայտման, առաջ չենք գնայ.- (Ազգ. Հեռու. 14/5/00): Նա իր ելոյթներից մէկում նշեց, որ Հանրապետական և Ժողովրդական

կուսակցութիւնները կը համագործակցեն և այդ դաշինքը խորհրդարանում կը կազմի մեծամասնութիւն, իսկ մեծամասնութիւնը նշանակում է արդիւնաւտ գործունէութիւն: Նա խորհուրդ տւեց ՀԺԿ անդամ Համա-յակ Յովհաննիսեանի վերջին յայտարարութիւնները ընդունել, որպէս անձնական կարծիք:



Արմէն Խաչատրեանը ասաց, որ վստահ է, Միասնութեան Դաշինքի անխոցելիութեան վրայ: Միասնութիւնը կայ և պէտք է լինի, և դա է եղել նաև մեր լիդերների պատգամը: Արմէն Խաչատրեանը յայտարարեց, որ 27-ի գործի բացալայտման առաջին շահագրգռուած անձանց շարքին է պատկանում, նրա խօսքերով՝ առանց այդ գործի ճշմարիտ բացալայտման առաջ չենք գնայ: Նա ասաց, որ մտածել, թէ հոկտեմբերի 27-ի գործի կազմակերպիչները, այդ ուղեղները դեռ դրսում են, որի հետեւանքով անպայմանօրէն կը ստեղծի կասկածի մթնոլորտ:

Իրանի լիազօր դեսպանը ժամանեց Երևան.- (Ազգ. Հեռու. 15/5/2000): 1998 թուականի նոյեմբերին արարուել էր Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան՝ Համիդ Ռեզա Նիքար Իսֆահանիի պաշտօնավարման ժամկէտը, նրա մեկնումից յետոյ, մինչ նոր դեսպանի նշանակումը, Մոհամմադ Ֆարհադ Զոլէյնի նշանակեց Հայաստանում Իրանի գործերի ժամանակատր հարատարմատար: Իսկ երկու ամիս առաջ նա նշանակեց Հայաստանում Իրանի արտակարգ և լիազօր դեսպան, ապրիլի 13-ին Մոհամմադ Ֆ.Զոլէյնի ժամանեց Հայաստան: Նրան դիմաւորեց դեսպանատան անձնակազմը: Դեսպանը բարցազրոյցում ա-սաց, որ ոչ մի բացասական երեւոյթ չի տեսնում, հայ-իրանական յարաբերութիւններում եւ ամէն ինչ նորմալ է: Հայ-Իրանական յարաբերութիւնները բարեկամական են և ընթանում

են զարգացման ուղիով: Այդ յարաբերութիւններում առաջընթաց է ըստաւում էնեթգետիկ և տրանսպորտային ոլորտների համագործակցութեան մէջ: Հայաստանը այսօր անկախ է, ունի որոշում կայացնելու ուժ և կարիք չունի դրսից պատուէրներ ստանալու, այդ անկախութիւնը արժեքատր է, չնայած, որ դրա համար պէտք է վճարել: Նա տեղեկացրեց, որ Հայաստան-Իրան զազամուդի կառուցման վերաբերեալ բանակցութիւնները մեծ ակտիւութիւն են ստացել, այժմ քննարկում են զազատարի Ֆինանսատրման գործում



ծագած հարցեր: Ճապոնիան, Չինաստանը, Եվրոպական երկրները և Ռուսաստանը եւս ակտիւութիւն են ցուցաբերում այս հարցի, լուծման մէջ: Միջազգային մի քանի բանկեր ցանկութիւն են յայտնել մասնակցել այդ ծրագրի իրականացմանը:

ՀՀ նախագահը ողջունեց նոր վարչապետ՝ Անդրանիկ Մարգարեանին.- (Ազգ. Հեռու. 13/5/00): Նա վոլջունեց Հանրապետական կուսակցութեան քայլը՝ այդպիսի պատասխանատու լթեան ստանձնումը: Ասելով որ Անդրանիկ Մարգարեանը ունի լուրջ քաղաքական փորձ: Վարչապետի պաշտօնը քաղաքական պաշտօն է, և համոզուած եմ շատ կարճ ժամանակահատուածում ձեռք կը բերի նաև այս պաշտօնում աշխատելու համապատասխան փորձ: 2-3 ամիսը մէկ, նախարարների կաբինէտում փոփոխութիւն կատարելը շատ սխալ է: Նման դէպքում նոր նշանակուած վարչապետը և եւս ստիպուած ենք լինելու բանակցութիւնների միջոցով



ձևատրել այնպիսի կառավարություն, որը կոչված կը լինի արդիւնատէտ աշխատանք տանելու համար:

Ես ամբողջութեամբ աջակցելու եմ վարչապետին և նշանակուած կառավարութեանը, դիտորդի կարգաւիճակ չեմ ստանձնելու: Համոզուած եմ, որ Անդրանիկ Մարգարեանի հետ, համատեղ աշխատելով, այդ նպատակին կը հասնենք: Եթէ քաղաքական խաղերին կառավարութիւնը եւ նախագահները մասնակից չդառնան, համոզուած եմ, որ իսկապէս երկարատև և արդիւնատէտ լուրջ աշխատանք կը տարի: Ընդհանուրով եմ նոր վարչապետին և յաջողութիւն եմ ցանկանում:



Վերջին մի քանի ամսայ ընթացքում առաջացած բարդութիւնները գալիս էին նրանից, որ կառավարութեան մի մասը փորձում է հակադրել հանրապետութեան նախագահին: Նման մօտեցումը դատապարտեց անյաջողութեան և փաստօրէն սա բերեց ներքաղաքական ցնցումների, որոնք էլ պատճառ

դարձան խոր ճգնաժամի: Այս իրադարձութիւնը նաև այն պատճառով է, որ քաղաքական որոշումներին, քաղաքական լուծումներին, փորձում էին մասնակցել որոշ ուժեր, որոնք քաղաքական պատասխանատուութիւն չունէին, պայքարելով բռնի ուժ գործադրելու միջոցով, յայտարարութիւններով և այլ ձեւերով: Ուղղակի այնպիսի միջոցառում ստեղծեց, որ լուծումը եղաւ վերջին իմ որոշումը:

ՕՇՇՅ 1/2 3 ԿՅ

Թուրքիան կը նպաստի Ադրբեջանին ՆԱՏՕ-ի գրասենեակ բացելու գործում.- (Մեշարեքաթ օրաթերթ 25/4/2000): Թուրքիայի «Մելլիս» թերթը գրում է, որ Թուրքիան իր պատրաստակամութիւնն է յայտնել Ադրբեջանի Հանրապետութիւնում ՆԱՏՕ-ի գրասենեակ հիմնելու կապակցութեամբ:

ՆԱՏՕ-ում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ Ունուր Էլիմենը յայտնել է, որ այս գրասենեակը իր մէջ կարող է ընդգրկել ոչ միայն ողջ Կովկասը, այլև ամբողջ միջին Ասիան: Նա աւելացրել է նաև, որ այդ գրասենեակի պարտականութիւններ մէջ միայն ռազմական հարցեր չեն համարուելու այլ նաև գի-

տական, մշակութային ու դաստիարակչական հարցերը:

Ադրբեջանի յեղափոխութիւնները իրենց զարակներին կլանում են.- (Իրան օրաթերթ 4/5/2000):

Այս վերնագրով մի յօդուած է լույս տեսել վերոյիշեալ օրաթերթում, որի հեղինակն է պրն. Շահրիար Աբասին, նա նշում է, որ շատերը այն կարծիքին են, թէ յեղափոխութիւնները կլանում են իրենց զարակներին: Աշխարհում գոյութիւն ունեն բազմաթիւ պատմական փաստեր, որոնք ցոյց են տալիս, թէ յեղափոխութեան միտք տողները և այն իրականացնողներ, յեղափոխութիւններից յետոյ չէզոքացում և հեռացում են ասպարէզից: Մրա հիմնական պատճառը՝ հեղինակը իղէալներին յետապնդելու հոգեբանութիւնն է համարում:

Թուրքիայի նախկին երևակայութիւնները.- (Իրան օրաթերթ 10/5/2000):

Թուրքիայի նախկին պրեզիդենտ Սուլէյման Դեմիրելը իր ժողովրդից պահանջել է պայքարել՝ Եվրոխորհրդին անդամակցելու ուղղութեամբ: Թուրքիայի անդամկցութիւնը նա համարում է Թուրքիայի ապահովութեան և ծաղկման առանցք:

(Խոհեր)

Յիշենք նաև նրան՝ ազգային մեծ բարերարին

Վլադիմիր Ալեքսանեան

Խօսքը Ալեքսանդր Մանթաշեանի մասին է, որի բազում բարեգործական ձեռնարկումներից երեւի թէ ամենայիշարժանը Փարիզի հայկական եկեղեցու փառահեղ համալիրի կառուցումն էր, որի համար նա սեփական միջոցներից ներդրել է հսկայական գումար: Հայոց հոգեւոր կենտրոնի առկայութիւնը Փարիզում ոչ միայն ազգային, այլև համաեւրոպական երեւոյթ էր: Այդ մասին են վկայում եկեղեցու բացման արարողութեան մասին ժամանակի մամուլում տպագրուած բազմաթիւ յօդուածները: Ահա դրանցից մէկը՝ «Մուրճի» հետեւեալ հաղորդումը. «Փարիզը ամբոխի այդպիսի հոծ զանգած հազարից մէկ է տեսնուած: Եկեղեցու բացման օրը նրա ընդարձակ բակում ասեղ գցելու տեղ չկար: Ֆրանսիացին այդ հոյեղէն կառոյցի դիմաց կանգնած էր շիւար (թէ ինչ «յանդգնութիւն» էր դա), իսկ հայը՝ հպարտ ու ինքնագոհ»:

Նոյն «Մուրճ» ամսագիրը այնուհետև սրտակսկիծ խօսք՝ մահազդ, պիտի տպագրէր. «Այսպէս սրտի ցաւով ու խոր վշտակցութեամբ, սակայն հպարտութեամբ վսեմ զգացումի գիտակցութեամբ ողջ թիֆլիսահայութիւնը եւ ուրիշ շատ քաղաքներից յուղարկաւորութեանը մասնակցելու եկած պատւիրակները իրենց յարգանքի տուրքը մատուցելով հայ ժողովրդի արժանաւոր զաւակ Ալեքսանդր Յովհաննէսի Մանթաշեանին, հաստատեցին այն անժխտելի ճշմարտութիւնը, որ մարդուս լաւ գործն ու բարի անունը յիշուում է ընդմիշտ, դարեդար: Այդ բացառիկներից մէկն է նաև Ալ.Մանթաշեանը, որի անունն ու գործը, իսկապէս, արժանի է մեծարանքի եւ առաւելապէս ընդօրինակման»: Արդ, այդ մեծ մարդու, ազգային բարերարի օրինակը այսօր, քան երբեւէ, պէտք է օրինակ ծառայի այն ունեւորներին, որոնք մի տնանկի, մի աղքատի օգտին չեն համարձակուում ձեռքը գրպանը տանել:

Շարցագրոյց

Պոկտ. Շարմիկ Ղաւթեանի

հետ

«Լոյս».- Նախ թոյլ տւեք «Լոյս» երկշաբաթաթերթի կողմից խորին շնորհակալութիւն յայտնել՝ ձեր բանկազին ժամանակը մեզ տրամադրելու կապակցութեամբ:

Հարց.- Ինչպէ՞ս էք գնահատում ներկայ պատգամատրական ժողովի գործունէութիւնը՝ անցած 14-15 տարիների ընթացքում:

Պ.- Նախ ես էլ ցանկանում եմ իմ շնորհակալական խօսքը յայտնել ձեզ՝ նման առիթ ստեղծելու կապակցութեամբ: Եւ միեւնոյն ժամանակ ուզում եմ շնորհատրել «Լոյս» երկշաբաթաթերթի լոյս ընծայման քայլը, նրա անձնակազմին ցանկանալով՝ յաջողութիւն այս առաքելութեան մէջ: Յոյսով եմ, որ թերթը կարողարացնի համայնքի սպասելիքները, որոնք պահանջում են հայ մամուլից: Ինչպէս արդէն գիտենք, ներկայում Պատգամատրական ժողովը 11-րդ շրջանի ժողովն է, եւ իր գործունէութիւնը սկսել է 1986 թ. մայիսից, չնայած որ կանոնադրութեան համաձայն այն իր գործունէութիւնը պէտք է ծաւալէր 4 տարի, այնուամենայնիւ այդ ընթացքը երկարատեւ եղաւ, քանի որ Իրանի ՆԳՆ-ը մեր կանոնադրութիւնը դեռ չէր հաստատել: Բայց, ինչքանով որ տեղեակ էք, արդէն այն գրեթէ ընդունել է, եւ արտօնութիւն է շնորհել մեզ նոր Պատգամատրական ժողով ստեղծելու համար: Իսկ ինչ վերաբերում է ներկայ Պատգամատրական ժողովին, ապա, պէտք է ասեմ, որ այն 14-15 տարւայ ընթացքում իր աշխատանքները տարել է մեծ եռանդով եւ նիւթածուր-եսմբ, չնայած որ դրանք շատ ծանր են եղել եւ հոգնեցուցիչ:

Հ.- Ըստ Ձեզ ինչպիսի՞ն են համայնքի, Պատգամատրական ժողովի եւ Թեմական խորհրդի փոխյարաբերութիւնները՝ ապագայում ուղեցոյց հանդիսանալու առումով:

Պ.- Ըստ թեմի կանոնադրութեան Պատգամատրական ժողովը ընտր-



ում է համայնքի կողմից: Իսկ Պատգամատրական ժողովը իր հերթին, ընտրում է Թեմական Խորհուրդ, որը հանդիսանում է համայնքի գործադիր մարմին, եւ հաշիւտու է Պատգամատրական ժողովին: Նշեմ նաեւ, որ Պատգամատրական ժողովը կեանքի է կոչում հաշիւեցնիչ մարմին, որը քննում է Թեմական Խորհրդի գործունէութիւնը եւ Թեմական Խորհրդի կողմից կազմւած մարմինների Ֆինանսական գործունէութիւնը: Այս միջոցառումը անցկացնելուց յետոյ, մարմինը եւս հաշիւտու է Պատգամատրական ժողովին: Թեմական Խորհուրդները եւ «հաշիւեցնիչ մարմինները» ըստ կանոնադրութեան, ընտրում են երկու տարով: Իրաքանչիւր երկու տարի մէկ Պատգամատրական ժողովը քննում է Թեմական Խորհուրդի կողմից տարած աշխատանքները եւ գրնահատում դրանք: Ապա այս արդիւնքները Պատգամատրական ժողովը ներկայացնում է յաջորդ Թեմական Խորհրդին: Եւ այսպէս շարունակ... Իսկ կապը ժողովրդի հետ Պատգամատրական ժողովի եւ Թեմական Խորհուրդի կողմից հետեւեալ կերպով է իրականացւում: Թեմական Խորհուրդը ուղղակի կապ է ստեղծում ժողովրդի հետ, որը իրականում կազմակերպւած հանդիպումների միջոցով: Իսկ ինչ վերաբերում է դպրոցներին, ապա դա արեւի դիւրին է լինում: Թեմական Խորհուրդը կապ է հաստատում ծնողական խորհրդի հետ: Կենտրոնական հոգաբարձութեան հետ անմիջական կապ են ապահովում

ծնողական խորհուրդները՝ նիստերի եւ տարբեր ժողովների միջոցով:

Հ.- Կարելի է ասել, որ ժողովուրդը Պատգամատրական ժողովի կողմից տարուող գործունէութեան ընթացքին տեղեակ չէ: Ձեր կարծիքով ինչպէ՞ս կարելի է վերացնել այս թերութիւնը, եւ դրա բացասական կողմերը որո՞նք են կարող լինել:

Պ.- Թեհրանում մենք ունենք թաղեր, այսինքն՝ վայրեր, ուր մեծաքանակ հայութիւն է բնակւում: Եւսայիսի բնակավայրեր կան նաեւ Թեհրանի մերձակայ շրջաններում, դրանք են՝ Գորգանը, Մարին, Մաշհադը, Արաքը եւ այլն: Ըստ կանոնադրութեան իրաքանչիւր 3000 հայ ընտրում են մէկ պատգամատր, եւ 1000 հոգի բնակչութիւն ունեցող հայաշատ շրջանները եւս ներկայացնում են մէկ պատգամատր, իսկ եթէ շրջանների բնակչութեան թիւը անցնում է 1000-ից, ապա այդ դէպքում, նրանք ընտրում են երկու պատգամատրական թեկնածու, որից յետոյ է միայն անցկացւում քւէարկութիւնը: Ինչպէս տեսնում էք, Պատգամատրական ժողովը ընտրում է ինքը՝ ժողովուրդը, եւ իր կողմից ընտրւած պատգամատրի միջոցով ժողովուրդը հարորդակից է դառնում Պատգամատրական ժողովի գործունէութեանը: Իրաքանչիւր թաղից ընտրւած պատգամատր, պարտաւոր է հաշիւտու լինել ժողովրդին եւ պատգամատրական ժողովում ներկայացնել թաղում ծագած բոլոր հարցերն ու խնդիրները: Այս ձեւով է ապահովւում կապը Պատգամատրական ժողովի եւ ժողովրդի միջեւ:

Հ.- Ինչպէս գիտեք Հայաստանում երկրաշարժից տուժածներին օգնութիւն յատկացնելու համար իրանահայրերը որոշակի գումարներ էին հաւաքել, այդ գումարները յատկացնելու Ղափանի շրջանում ծորակաշինական գործարանի կառուցմանը: Եթէ որեւէ տեղեկութիւններ ունէք տեսալ խնդրի վերաբերեալ, ապա կը խնդրեմ ներկայացնել:

Պ.- Պատգամատրական ժողովը չի գրադել այդ հարցով, քանի որ այն չի եղել իր ծրագրի մէջ: Բայց ես կաշխատեմ պատասխանել այդ հարցին, այնքանով, ինչքանով, որ ես տեղեակ եմ: Դա, ինչպէս դուք արդէն տեղեակ էք, իրանահայրերի կողմից հաւաքւած դրամներով գնւած մի

գործարան է, որը արտադրելու է ծորակներ, եւ շուտով այն կը յանձնի շահագործման: Որքանով, որ ես եմ տեղեակ, այդ հարցով զբաղող յանձնաժողովը աշխատանք էր տանում բնակչութեան տարբեր շրջանների հետ՝ գործարանը տեղաբնիկներին փոխանցելու նպատակով: Բայց յաջողութիւններ դեռեւս ձեռք չեն բերել եւ չեն գտնել մարդիկ, որոնք ցանկութիւն յայտնեն գործարանի ղեկավարութիւնը յանձնառնելու: Սակայն վերջերս մի ուրախալի փաստ է արձանագրուել, Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յայտնել են, թէ Էջմիածինը պատրաստ է՝ իր հովանու տակ առնելու գործարանը: Եւ, կարծում եմ, որ այս գործը իր ընթացքի մէջ է:

Հ.- Պատգամատրական Ժողովի անդամների թիւը զգալի կրճատել է, ի՞նչն է դրա պատճառը եւ ինչպի՞սի իրավիճակ է տիրում հիմա Պատգամատրական Ժողովում:

Պ.- Այո, այդ փաստը իհարկէ գորանցել է, եւ դա բնական երեւոյթ է, քանի որ 1986 թ-ից Պատգամատրական Ժողովը գոյութիւն ունի, անդամներից շատերը դժբախտաբար մահացել են եւ նրանց թիւը 53-ից հասել է 45-ի:

Հ.- Նոր Պատգամատրական Ժողովի ընտրութիւնները անցկացնելու նպատակով, պէտք է ընտրուի կենտրոնական ընտրական յանձնախումբ, արդէօք չէ՞ք կարծում, որ այն եթէ չընդգրկի հասարակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչներին եւ միատարր լինի, ինչ-որ տեղ կարող է բացասական հետեւեւեքներ թողնել համայնքում: Այդ յանձնախումբը ի՞նչ չափանիշներով է ընտրուելու եւ ո՞րն է լինելու յանձնախմբի գործունէութեան բնոյթը:

Պ.- Ըստ կանոնադրութեան Պատգամատրական Ժողովի ընտրութիւնների կազմակերպումը վերապահում է Թեմական Խորհրդին: Վերջինս է կեանքի կոչում 11 հոգուց բաղկացած ընտրական յանձնախումբը: Այդ յանձնախումբը իր աշխատանքները ծաւալելու է՝ իր կողմից կազմած ներքին կանոնադրութեան համաձայն, ինչը հաստատելու է Իրանի ՆԳ նախարարութիւնը: Ասեմ, որ Իրանի ՆԳ նախարարութիւնն ընտրութիւնների ժամանակ ունենալու է իր ներկայա-

ցուցիչը: Կենտրոնական ընտրական յանձնախումբը պէտք է թաղերում եւ շրջաններում ընտրական աշխատանքներ ծաւալի՝ ժողովրդին տեղեկատուութիւններ տալու, պատգամատրների թիւը ճշտելու եւ այլն: Իսկ ինչ վերաբերում է ընտրական յանձնախմբի կազմին, ապա Թեմական Խորհուրդը մտադրութիւն ունի՝ նրա մէջ տարբեր խաւերի ներկայացուցիչներ ընդգրկելու:

Հ.- Անցեալ ընտրութիւնների ժամանակ 30 հոգուց բաղկացած գործադիր մարմին էր կեանքի կոչել եւ բոլոր անդամները Վարդան Վարդանեանի ընտրատարածքում էին աշխատում, արդէ՞օք կարող է նոյնը հիմա կրկնել եւ խտովութիւնների



տեղիք տալ:

Պ.- Ես արդէն ասացի, որ բոլոր այդ հարցերը վերաբերում են Թեմական Խորհրդին: Իսկ մեզ մնում է յուսալ, որ Թեմական Խորհուրդը հաշի կամոնի այդ հանգամանքը եւ կը գոհացնի ժողովրդին:

Հ.- Ինչպիսի՞ն կը ցանկանայիք տեսնել ապագայ Պատգամատրական Ժողովը, ունենալով՝ բաւականին փորձառութիւն այդ աշխատանքներում:

Պ.- Այդ ժողովը օրենսդիր մարմին է եւ կարելու էր դեր ունի: Այն գործադիր մարմնի՝ Թեմական Խորհրդի գործունէութեանը հետեւող աչքն է:

Պատգամատրը ներկայացնում է իր թաղի ժողովրդի պահանջները, ծագած խնդիրները, եւ այդ հարցերը Պատգամատրական Ժողովում քննարկելուց յետոյ է, որ միայն գործադրում է Թեմական Խորհրդի կողմից: Այդ պատճառով, նա պէտք է լատենտեակ լինի Պատգամատրական Ժողովի աշխատանքներին եւ պարտականութիւններին, Թեմական Խորհրդի գործունէութեան սահմաններին, հասարակական, համայնքային, եկեղեցական հարցերին, ընդհանուր ազգային դրածքին, որպէսզի կարողանայ պաշտպանել ժողովրդի շահերը:

Հ.- Վերջում կը ցանկանայի իմանալ Ձեր կարծիքը իրանահայ մամուլի վերաբերեալ:

Պ.- Անժխտելի է, որ մամուլը, զիբքը, գրականութիւնը շատ օգտակար է ժողովրդի համար եւ որքան շատ, այնքան աւելի լաւ: Միայն թէ անընթացեալ է, որպէսզի մամուլը կարողանայ շօշափել ժողովրդի խնդիրները, արծարծել նրա տեսակէտները: Այս առումով, մեր մամուլը շատ սահմանափակ է, տնտեսական, հասարակական, գրական տեղեկութիւնների կողքին, բացակայում են ժողովրդի հոգսերը արտայատող միջերը:

Հ.- Ձեր խօսքը կան պատգամը ժողովրդին:

Պ.- Ես մաղթում եմ իմ սիրելի ժողովրդին որպէսզի նա, համախմբի ազգային դրածքի շուրջ եւ ամեն կերպ նպաստի նրա աշխատանքներին, դպրոցներում, եկեղեցիներում եւ այլ ազգային բոլոր մարմիններում:

Հարցազրոյցը վարեց
Դոկտ. Ռ. Սարգսրեանը

لاستیک سازی آموس
سازنده قطعات لاستیکی صنعتی ، انواع
زیره های کفش و کفشهای ورزشی
جاده آبعلی خیابان سازمان آب خیابان
پنجم شیدایی نبش دوم جنوبی پلاک ۳۰
فکس ۷۳۳۲۶۶۷ تلفن ۷۳۴۹۹۳۰ موبایل
۰۹۱۱-۲۰۴۰۷۴۱

ՄՈՒՏԱԿ ՄՐԱԸ
تالار پذیرایی سفید
آماده پذیرایی از جشنها و مجالس در
تالار و منزل با کیفیت عالی
جاده دماوند خیابان وحیدیه
پلاک ۵۶
تلفن ۷۸۱۶۴۹۱

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թէև արտաքին քաղաքականութիւնը գործադիր իշխանութեան՝ կառավարութեան իրաւասութեան ոլորտ է, բայց և այնպէս օրենսդրական, մակ քաղաքական մարմնի կարծիքով խորհրդարանը յաճախ անդրադարձել է այս բնագավառում ծառայած հիմնախնդիրներին: Ամենից առաջ խորհրդարանը արձագանգեց 1918թ. սեպտեմբերին Բաքուում կատարած հայերի կոտորածը: Խորհրդի հոկտեմբերի 26-ի նիստում որոշեց Բաքուի աղետալ հայերին, որպէս օգնութիւն, յատկացնել 500 հազար ռուբլի: Միաժամանակ խորհրդարանը հիմք ընդունելով էսէռական խմբակցութեան բանաձևը՝ իր բողոքի ձայնը բարձրացրեց՝ նշանակելու այն զազանութիւնները, որոնք թուրք վայրենի հրոսակները գործադրել էին Բաքուի խաղաղ հայ ազգաբնակչութեան նկատմամբ:

Հայաստանի խորհրդարանի և քաղաքական կուսակցութիւնների համար 1918թ. վերջերին արտաքին ոլորտի ամենատուր խնդիրներից էր հայ-վրացական սահմանային վեճը: Խորհրդարանը մի քանի անգամ անդրադարձաւ այդ խնդրին և ընդունեց որոշում՝ խաղաղ միջոցներով լուծել Լոռի- Ախալքալաք տարածքային վեճը: Սակայն գործը հասաւ երկշաբաթեայ զինաբախման: Ռազմական գործողութիւնները դադարեցին և կնճիղը յարթելու նպատակով Լոռի մեկնեց խորհրդարանական յանձնաժողովը: Նրանում ընդգրկուած էին Գ. Տեր- Խաչատրեանը (ՀԺԿ), Մ.Յարութիւնեանը (ՀՅԴ), Մ. Խաչատրեանը (ՀՅԴ), և Ա.Խոնդկարեանը (Էսէռ), Ս.Մամիկոնեանը (անկուս) և զօրավար Դորդանեանը: Խորհրդարանական պատիրակութիւնը անշուշտ, օգտակար դեր խաղաց արիւնահեղութեան շուտափոյթ դադարեցման գործում:

Աշխարհամատի յաղթական արարից յետոյ Հայաստանի խորհրդարանի միջոց դարձաւ Հայկական հարցը: Թէև Հայաստանը Փարիզի խաղաղութեան կոնֆերանսին պաշտօնապէս հրաւիրուած չէր, սակայն հանրապետութեան պահանջներն այնտեղ ներկայացնելու համար դեկ-

տեմբերի 3-ին խորհուրդը ձայների մեծամասնութեամբ որոշեց Եւրոպա ուղարկել պատիրակութիւն, որի ղեկավար նշանակեց Աւետիս Ահարոնեանը:

Գարձեալ ՀՅԴ եւ ՀԺԿ խորհրդարանական խմբակցութիւնների համաձայնութեամբ որոշեց, որ Փարիզի խաղաղութեան կոնֆերանս մեկնող պատիրակութեան կազմը եւ նրան տրուելիք հրահանգները պէտք է որոշի ոչ թէ խորհրդարանը, այլ կառավարութիւնը:

1918 թ. դեկտեմբերի 5-ին եւ 7-ին նախարարների խորհուրդը լսելով վարչեպետի զեկուցումը՝ Եւրոպա պատիրակութիւն ուղարկելու մասին, որոշեց պատիրակութեան կազմը (Ա.Ահարոնեան, Մ.Պապաջանեան, Հ. Օհանջանեան) եւ հաստատեց առաքելութեան գործունէութեան հրահանգը, որը լիազօրում էր պաշտպանել միացեալ եւ անկախ Հայաստանի գաղափարը:

Դրա դէմ բողոքեցին «ձախերը»: Նրանք իրենց բողոքը հիմնաւորում էին նրանով, որ գերագոյն իշխանութիւնը խորհրդարանն է եւ ոչ թէ կառաւարութիւնը, ուստի երկրի ու ժողովրդի համար կարեւորագոյն հարցերի վճռման իրաւունքը վերապահուած է խորհրդարանին: «Կենտրոն» եւ «աջակողմեան» խմբակցութիւնները անհանգստանալու հիմքեր չունէին, քանզի կառաւարութեան կազմում իրենց ներկայացուցիչներն էին: Վերջիններս սկսեցին աւելի յաճախ չնստել «ձախակողմեան» խմբակցութիւնների հետ եւ պատմութեան ու ժողովրդի համար կարեւոր հարցերի լուծումը յանձնել կառավարութեանը, որպէսզի «ձախերը» այդ գործում մասնակցութեան ու միջամտութեան հնարաւորութիւն չունենան:

Կառավարող եւ խորհրդարանում մեծամասնութիւն կազմող «կենտրոն» եւ «աջակողմեան» խմբակցութիւնները սկսեցին աւելի յաճախակի դիմել նման քայլերի, որպէսզի մեկուսացնեն «ձախերի» արկրի քաղաքական կեանքի ղեկավարմանը մասնակցելուց: Ինքնին հասկանալի է, որ նման գործողութիւնների հետե-

ւանքով ինքնաբերաբար նեղացում ու սահմանափակում էր գերագոյն իշխանութեան խորհրդարանի դերը: Խորհրդարանը ձայների մեծամասնութեամբ որոշուց կայացրեց պատիրակութեան նախատեսելիք ծախսերի համար բաց թողնել 700 հազար ռուբլի վարկ:

Խորհրդարանի գործունէութեան հիմնական առանցքը օրինաստեղծ աշխատանքն էր, երկրի բնականոն կենսագործութեան համար անհրաժեշտ իրաւական դաշտի ստեղծումը: Հայաստանի խորհուրդը մի կողմից փորձում էր ստեղծել իր սեփական, ազգային բովանդակութեամբ օրէնքները, իսկ միւս կողմից՝ ժամանակի տղութեան եւ արհեստավարժութեան պակասի հետեւանքով, ընդօրինակում ու յարմարեցնում էր դրսի օրէնքները: Քանի որ ՀՀ որպէս պատմական միաւոր անջատել էր, փաստօրէն, նախկին Ռուսական կայսրութիւնից, ուստի 1918 թ. դեկտեմբերի 6-ին հաստատուած օրէնքով նպատակայարմար գտան ՀՀ տարածքի վրայ ժամանակաւորապէս պահպանել նախկինում գործող օրէնքները որոշ փոփոխութիւններով ու լրացումներով: Մի շարք օրէնքներով քայլեր ձեռնարկեցին դատական իշխանութեան ձեւաւորման ուղղութեամբ: Հանրապետութիւններում օրինականութեան վերականգնման եւ կարեւոր կանոն հաստատելու նպատակով, ներքին գործերի նախարար Արամի ներկայութեամբ, ընդունեց անօրինական զենքի բռնագրքաման եւ պետականացման մասին օրէնքը, որով կառաւարութիւնը հետամուտ էր մի կողմից ամբեպնդել երկրի ներքին կայունութիւնը, իսկ միւս կողմից՝ բռնագրաւած զենքով զինել նորաստեղծ հայկական բանակը: Խորհրդի մի շարք օրէնքներ վերաբերում էին պետական մեծաշրճողի ու բռնագրավումների քաղաքականութիւնը, որոնք, ինչ խօսք, բացասաբար անդրադարձան տրտեսական կեանքի վրայ: Պետական մեծաշրճողի ու բռնագրավումների քաղաքականութեանը առանձնապէս երանգ էին պաղորդում «ձախերը»: Արխիւային վաւերագրերը ցոյց են

տալիս, թէ պետական մենաշնորհի ու բռնագրաւումների քաղաքականութիւնը եւ դրան ուղեկից չարաշահումները, զեղումները, առանձին սպառազէն խմբերի կամայականութիւնները ինչպիսի մեծ չաբերի էին հասել:

Հայաստանի խորհուրդը ընդունել է նաեւ կրթութեանն ու մշակութիւն վերաբերող օրինագծերի ու օրէնքների մի մեծ փաթեթ: Բայց եւ այնպէս հանրապետութիւնում պակասում էին շատ օրէնքներ:

Խորհրդարանի գործունէութեան կարեւոր ոլորտներից էին բիզէն, Ֆինանսավարկային քաղաքականութիւնը: Հանրապետութիւնը չի ունեցել տնտեսական ու սոցիալական զարգացման յստակ ծրագիր: Պետական ծախսերը կատարում էին նախահաշիւների համաձայն, որոնք կազմում էր կառավարութիւնը եւ հաստատում խորհրդարանը: Նախատեսող վարկային յատկացումները ստանում էին օրէնքի տեսք: Խորհրդարանի կողմից հաստատւած տարեկան նախահաշիւների ամբողջութիւնն էլ, փաստօրէն, կազմում էր հանրապետութեան տարեկան պետբիջէն: Մովորաբար Ֆինանսական ոլորտը այն գլխաւոր լծակն էր, որով խորհրդարանն ազդում էր կառավարութեան վրայ: Տեսլանքը ցոյց են տալիս, որ ծախսերը տասնապատիկ զերագանցել են եկամտուները:

Ինչ վերաբերում է հողային խնդրին, կարելի է ասել, որ թէ՛ խորհրդարանը, եւ թէ՛ կառավարութիւնը յիշեալ խնդրի ուղղութեամբ հետետողական քաղաքականութիւն չվարեցին: Այստեղ խանգարող հանգամանքներ էին խմբակցութիւնների խայտաբղէտ ազդարային ծրագրերը, ինչպէս նաեւ ժամանակի սղութիւնն ու երկրի սոցիալ-քաղաքական զարգացման անորոշութիւնը:

Ի տարբերութիւն դրա՝ խորհրդարանի ուշադրութեան կենտրոնում է եղել 300 հազարից ատէի գաղթականների եւ մօտ 40 հազար թափառական ու անօգնական որբերի խնամատարութեան խնդիրը: Պետական մակարդակով բազմաթիւ օրէնքներ են ընդունել նրանց Ֆինանսական ու պարենային օգնութեան կազմակերպման, աշխատանքի տեղադրման, հողամասեր յատկացնելու, որբերի արհեստագործական ուսուց-

ման ուղղութեամբ եւ այլն: Խորհրդարանում ընկերային բնոյթի հարցերով ու հարցապնդումներով ատէի շատ հանդէս էին գալիս «ճախակողմեան» խմբակցութիւնները: Մակայն դրան հակառակ, նրանք դժգոհելով կառավարութեան արտաքին ու ներքին քաղաքականութիւնից, յաճախ դէմ էին քւտարկում բանակին եւ երկրի պաշտպանութեան նպատակներին վարկեր տրամադրելուն:

Արդէն 1919թ. սկզբներից բացայայտ դարձան հակասութիւնները կառավարող (ՀՅԴ եւ ՀԺԿ) կուսակցութիւնների եւ «ճախերի» միջեւ: 1919թ. փետրարին խորհրդարանի դահլիճում նոյնիսկ գործը հասաւ ծեծկռտուքի: Իր հերթին ներքին



հակասութիւն կար նաեւ կառավարող երկու՝ ՀՅԴ եւ ՀԺԿ կուսակցութիւնների միջեւ որոնցից մէկը միաի նկատմամբ պատասխանատուութիւնը չէր ուզում կրել: Խորհրդի լուծարման համար առիթ հանդիսացաւ Հայաստանի անկախութեան առաջին տարեդարձի օրը 1919 թ. մայիսի 28-ին, ճայների մեծամասնութեամբ, կառավարութեան պաշտօնական յայտարարութիւնը միացեալ եւ անկախ Հայաստանի հռչակման եւ Հայաստանի խորհուրդը արեւմտահայ 12 ներկայացուցիչներով համալրելու մասին: Այդ յայտագրին բացայայտ դէմ արտայայտեցին ոչ միայն «ճախերը», այլեւ Դաշնակցութեան հետ կոալիցիա կազմած Հայ Ժողովրդական կուսակցութիւնը: Այս ակտի զերմապատակը՝ մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ կառավարութիւն գաղափարի՝ որպէս պետական քաղաքականութեան, աստիճանական իրագործումն էր: «Այդ ակտի նրպատակն էր, - մտահոգում էր Ս. Վրբացեանը, - արագացնել հայ ժողովրդի երկու հատածների միութիւնը եւ յայտարարել ի լուր աշխարհի հայ ժողովրդի անհողորդ կամքը՝ անկախ պետական կեանքով ապրելու»: Արեւած յայտարարութիւնը պէտք է

ամրապնդէր գործնական քայլերով: Նախատեսում էր, բանակցելով արեւմտահայ քաղաքական շրջանների հետ, կազմել միացեալ Հայաստանի կառավարութիւն եւ միացեալ խորհրդարան:

Դրան հակառակ Պողոս Նուբար փաշայի գլխաւորած արեւմտահայ ազգային պատուիրակութիւնը օտարոտի վերաբերմունք ցուցաբերելով իրական Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ՝ Տաճկահայաստանի հարցը հակադրում էր ՀՀ-ը: Դրա հիման վրայ պատուիրակութիւնը նոյնիսկ դիմակայել է օտար պետութիւնների կողմից ՀՀ ճանաչմանը՝ գտնելով, որ դա իբր «կարող է թուլացնել Տաճկահայաստանի դատը: Իսկ այդ գործում Նուբար փաշային օգնել է նաեւ Անդրանիկը»: Պողոս Նուբարը պատճառաբանում էր հետեւեալ կերպ. քանի դեռ Ռուսաստանը իր վերջնական խօսքը չի ասել Ռուսահայաստանի խնդրում, ուստի» Տաճկահայաստանի հարցը պէտք է անջատ պահել, որպէսզի դաշնակից պետութիւնները ռուսական հարցը պատճառ չդարձնեն տաճկահայ դատի լուծման ճգճման համար»: Փաշայի այս բացատրութիւնից կարելի է հասկանալ, որ նա ուզում էր հասնել Տաճկահայաստանի (հնարաւորութեան դէպքում նաեւ Կիլիկիայի հետ) ինքնուրոյն անկախութեան հռչակմանը, ինքն էլ դառնար վարչապետ: Այս ակնկալութեամբ նոյնիսկ կազմեց կառավարութիւն, որը, սակայն, մնաց թոթի վրայ: Ինքնին հասկանալի է, որ մնան հակադիր դիրքորոշումները չէին կարող նպաստել Հայկական հարցի ամբողջական լուծմանը:

Դաշնակցութեան եւ Ս ռամկավարների միջեւ ծագած քաղաքական այս տարաձայնութեան հարցում Դաշնակցութեան հետ կոալիցիա կազմած Ժողովրդական կուսակցութիւնը միանշանակ պաշտպանեց իր կուսակից ռամկավար Պողոս փաշային: ՀՀ կառավարութեան «մայիսի 28-ի» ակտը ներքաղաքական լարած պայքար առաջ բերեց Հայաստանի երկու ազդեցիկ՝ ՀՅԴ եւ ՀԺ կուսակցութիւնների միջեւ: Նրանց միջեւ սկսւած պայքարը դուրս եկաւ խոր-հրդարանի եւ կառավարութեան շրջանակներից:

Շար. 2

ՄԵՐ ԱՌՕՐԵԱՆ ԱՊՐԵՆՔ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԻՇԵԼՈՎ

Կիրուշ Արզուեան

Կրկին ապրիլ ամիս, կրկին 1.5 միլիոն հայ նահատակների յիշատակի ոգեկոչում, կրկին ճիգ ու ջանք նոր սերնդին յիշեցնելու՝ մէկ ու կէս միլիոն նահատակների կրած չարչարանքը, հաղորդակից դարձնելու նրան Տէր Ջօրի անապատում քայլող՝ հայ ծնողի ու երեխայի, հայ տատիկի ու պապիկի տառապանքին եւ մի պահ ապրեցնելու նրան այդ չարչարանքը՝ յանուն այսօրայ իր գոյութեան հայ ապրելու համար:

Շուրջ երկու ամիս շարունակ՝ հանդիպումներ, կազմակերպչական աշխատանք, հայրենիքից ու հեռուոր Կալիֆորնիայից մտաւորական ու արեստագէտ հրաւիրալու, տեղիս ուժերին եւս օժանդակութեան հրաւիրելու՝ հսկումի գիշեր, հոգեհանգստեան արարողութիւն, ծաղկեմատոյց, դպրոցական համահաւաքներ, պատարագ, խօսք, յորդորանք, արեան յանձնում...

... Եւ այս բոլորը՝ այսօրայ մեր նոր սերնդին, սփիւքահային մօտեցնելու համար 1.5 միլիոն նահատակներին:

Եւ... Ո՞ր եւս գնում հայ նոր սերունդ...

Արդեօք զգո՞ւմ ես, որ դու եւս ժառանգորդը քո սեփական երկրի, դու եւս պահապանը քո մայրենի լեզուի, եւ դու եւս, որ պիտի արդարացնես 1.5 միլիոնի կեանքի գնով քեզ վստահած Մեսրոպեան աւանդը, եւ Տիգրան Մեծի կերտած հզօր հայրենիքի մի փոքր հողամասի պահողը եւ պահպանողը: Թէ՞ գնում ես կրկին մոռանալու Մայրիկ 24-ի խորհուրդը, խորտակելու քո անձնական մտահոգութիւնների ու հաճութեան գրկում, մինչեւ յաջորդ տարի ապրիլի քսանչորսով:

Պատարագ, ծաղկեմատոյց, հրկումի գիշեր, արեան յանձնում, քայլադաշտ եւ գեղարեստական միջոցառումներ, զեղեցիկ մտքեր ու խօսքեր...

Պատարագ՝ Թեհրանում, միւս գաղթօջախներում, համայն աշխարհում՝ նիւրած հայ ժողովրդի նահատակութեան եւ յարութեան յատուկ յիշատակին:

Ծաղկեմատոյց՝ ծաղիկների նիւրում քիւրատր նահատակ մանուկների, մայրերի ու հայրերի յիշատակին. դա նշանակում է՝ քարոյ է ձեր յիշատակը մեր սրտերում:

Հսկումի գիշեր՝ ժամեր արթուն հսկելու, անքուն գիշեր տառապանքի գիշեր, մի պահ նոյնանալու համար մեր նահատակների հետ:

Արեան յանձնում՝, մի մարդկային նիւրում, իր նմանի կեանքը փրկելու համար. քէւ մէկ ու կէս միլիոն հայի արին քափեց, սակայն հայը մարդկային եւ իր նմանի (ինչ ազգի էլ պատկանի նա) կեանքը արժեքատրոյ ժողովուրդ :

Քայլադաշտ՝ երկու ժամ քաղաքում, տաք ու կիզիչ արեւի տակ քայլել, ծարս զգալ բայց ջուր չիմել, քաղց զգալ բայց չուտել, մի պահ ապրելու համար անապատում զոհած մեր քոյրերի ու եղբայրների կրած տառապանքի մէկհազարերորդը:

Խօսքեր արտասանած՝ Սրբազան Հօր, Պրոֆեսոր Ռիչարդ Յովհաննիսեանի, Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Գեղամ Դարիբջանեանի միջոցով եւ բոլորը յիշեցնելու համար, մեր մէկ ազգ ու մէկ երթ, միասնական հայրենիք ու սփիւք իրականութիւնը:

Բայց ո՞ր եւս լսող հայ նոր սերունդ, լսող հայ ծնող, լսող հայ ուսուցիչ, լսող եւ ուխտող վերանորոգող հայ:

Այս բոլորից յետոյ, պիտի անդրադառնամ ապրիլի 24-ի երեկոյեան Արարատ մազաւանում կազմակերպւած կենտրոնական ձեռնարկին, ուր ժողովրդի մասնակցութիւնը անմասնընթաց էր ու ոգեւորիչ, բեմայարդարումը գեղեցիկ էր եւ իմաստալից. բեմի խորքում ցուցադրած պարաները, որոնցից իրաքանչիւրից կախւած գրքերն ու կարմիր ծաղիկները, խորհրդանշում էին մեր նահատակ մտաւորականութիւնը, որոնք զոհեցին 1915-ին թողնելով մեզ իրենց հարուստ գրականութիւնը: Կենտրոնում կապոյտի վրայ, սպիտակ աշխարհի քարտէզը, որի մէկ մասը կարմիր գոյնով ներկւած էր եւ խորհրդանշում էր հայի արինը:

Այո՛, սպիտակ է աշխարհի քարտէզը, երբ լուռ է եւ անտարբեր ու անզոյն մեր զոհերի նահատակների քափած արեան հանդէպ, յանուն մեր պահանջատիրութեան, իսկ քարտէզի առաջամասում ու հէնց կենտրոնում քարձրացած փայտէ խաչը՝ հայի հաւատքն էր, զոգոթան: Այս բոլորը, միաձուլւած լոյսերի մէջ, նախ՝ կարմիր

արին, ապա եռագոյն ու վերջում լոյս ու լոյս:

Տպաւորիչ էր «Հայր Մերի» հնչեցումը, պարզ ու խորհուրդ փոխանցող, ապա պետական հիմնը, բացման խօսքը:

Մողոմն Թեհերեանի դատավարութեան մի հատուածի բեմադրումը՝ միացնելով Միամանթօի «Պար»-ին ու կոյսերի շարժումներին՝ կարկատան էր:

Այդ բաժինը տպաւորիչ չհամարեցի:

Նախ սխալ էր յատկապէս Եղեռնի զոհ դարձած արեւմտահայ բանաստեղծ Միամանթօի «ՊԱՐԸ» փոխել արեւելահայերէնի, հաշի առնելով, որ ժողովուրդը արեւմտահայերէն չի ընկալում. փաստը այն, որ նոյն ժողովուրդը լուռ ընկալեց արեւմտահայերէնով արտասանած՝ Սրբազան Հօր եւ օրայ յարգելի բանախօս Պրոֆ. Ռիչարդ Յովհաննիսեանի խօսքերը:

Եթէ մի հատուած ենք միացնում Մողոմն Թեհերեանի արեւելահայերէնով բեմադրած դատավարութեանը, ապա ճիշտ կը լինէր, Եղեռնից մի ուրիշ դուրս գնորել, բայց անպայման արեւելահայ գրողից:

Չէի զգում Միամանթօն, չէի զգում Թեհերեանին ու իր կատարած գործի նպատակն ու արժէքը, իսկ ասումնքի թոյլ կատարումը չէր համընկնում հարսների պարի հետ:

Այդ կատարումն ու միջոցառումը նորութիւն չէ մեզ համար եւ, զոնէ, թեքանահայութիւնը ծանօթ է այդպիսի բեմադրութիւններին:

Իսկ երգերի բաժինը քէւ ոգեւորիչ էր, բողոք ու հայրենասիրութիւն փոխանցող, Արցախ ու մարտիկ յիշեցնող, սակայն այնքան երկարաշունչ, որ մոռացնել ւտեց օրայ խորհուրդը, եթէ ւարստին Սրբազան Հօր այնքան տպաւորիչ ու իրատես խօսքը չլինէր:

Վերջում ինձ մնում է միայն ասելու՝ որ վարձքներդ կատար բոլոր մասնակիցներ, բոլոր դպրոցների ու միութիւնների պատասխանատուներ եւ Ապրիլեան Եղեռնի 85 ամեակը ոգեկոչող յանձնախմբի իրաքանչիւր անդամ:

Վարձքդ կատար, հայ՛ ժողովուրդ, որ քո ներկայութեամբ արդարացրեցիր քո գոյութիւնը մեր հայրենակիցներին մօտ...

...Իսկ ամենօրեայ ներկայութիւնը՝ գրաւականն է մեր պահանջատիրութեան:

Շարժազրոյց Էջմիածնի «Շարժ Ազնաւոր»-ի անւան դրամատիկական թատրոնի տնօրէն՝ պրն. Ռոբերտ Վարդարնեանի հետ



«Շարժ Ազնաւորի» թատերախումբը
«Լոյսի» գրասենեակում:

Լոյս. Նախ թոյլ տւէք «Լոյս» երկ-
շաբաթաթերթի անունից շնորհա-
կալութիւն յայտնել՝ Ձեր ժամանակը
մեզ տրամադրելու համար:

Հարց. Պատմէք խնդրեմ Ձեր թա-
տերախմբի մասին:

Պ. Մեր թատերախումբը կազմւած է
երկու թատրոններից՝ դերասանների
մի մասը Արտաշատից են, իսկ միւսը՝
Էջմիածնից: Այս միացումը նորամու-
ծութիւն չէ, քանի որ դա կիրառել է
մէկ անգամ եւս՝ 1995 թականին: Մեր
երկու թատրոնները ղեկավարում է
հմուտ բեմադրիչ՝ Մայիս Ռաֆաէլ-
եանը:

Հ. Մի փոքր պատմէք ընդհանրապէս
Էջմիածնի դրամատիկական թատ-
րոնի կազմաւորման գործընթացի
մասին:

Պ. Մեր թատրոնը ձեւաւորել է շատ
վաղուց, եւ որպէսզի շատ հեռու չան-
ցնեն, ասեմ, որ մինչեւ 1952 թականը
գործել է Համո Խարատեանի անւան
պետական դրամատիկական թատ-
րոնը: 1952 թականին կառավարութեան
որոշմամբ մի շարք շրջան-
ներում, այդ թում նաեւ Էջմիածնում,
փակեցին թատրոնները: Ապա մեր
թատրոնը իր գործունէութիւնը շա-
րունակեց Արտաշատում, քանի որ
Էջմիածինը Երեւանին աւելի մօտ էր
գտնուում, հետեւաբար պետութիւնը
որոշեց այն թողնել Երեւանի թատ-
րոնների սպասարկման գոտում:
1952 թականից յետոյ Էջմիածնում
ստեղծեց նոր ինքնագործ թատրոն,
որը բաւականին վերելք ապրեց: Այդ
թատրոնը իր գործունէութիւնը շա-
րունակեց մինչեւ 1990 թականը:
Հարկ եմ համարում ոչնէ, որ 1967-
1990 թականների ընթացքում խոր-
հրդային միութեան մասշտաբով, տե-
ղի ունեցան փառատօններ , մեր
թատրոնը չորս անգամ առաջին
տեղն է զբաղեցրել: Բայց

1990 թականից խորհրդային կար-
գերի տապալումից յետոյ, հնարա-
ւորութիւն առաջ եկաւ նոր թատրոն
հիմնելու եւ աւելի պրոֆեսիոնալ ըս-
կըզբունքներով առաջնորդելու հա-
մար: Այդ ժամանակ մեր թատրոնը
կրկին վերանանուեց «Դրամատիկա-
կան», ունեցաւ կայուն կազմ եւ
խաղացանկ: Պրոֆեսիոնալիզմ ասե-
լով՝ հասկանում ենք այն հանգա-
մանքը, որին համաձայն դերասան-
ները այլեւ չեն աշխատում թատ-
րոնում կամաւոր կերպով, այլ ստա-
նում են աշխատավարձ: 1990 թա-
կանին մեր առաջին բեմադրութիւնը
եղաւ Լ. Շանթի «Ընկած Բերդի
Իշխանուհին» ողբերգութիւնը, որը,
պարծանք չհամարի ասելը, յաջո-
ղած բեմադրութիւն էր, քանի որ
մասնակցում էր դերասանների եւ
արեստագէտների մի աստղաբոյ:
Դրանց շարքում էին նաեւ՝ Մարգիս
Առուշեանը եւ Գրիգոր Միսնեանը:
Այս բեմադրութիւնը ողջունեց հա-
յաստանեան բազմաթիւ արեստա-
գէտների կողմից: Լեւոն Շանթ առա-
ջին անգամ էր բեմադրում, քանզի
նախկինում երկրում տիրող կարգերի
կողմից նա արգելւած էր: 1990
թականի աշնանը մեր թատրոնը
կրկին վերանանուեց, այն կոչեց
«Շարժ Ազնաւոր»-ի անւան դրամա-
տիկական թատրոն: 1990 թականից
սկսած առաջին հինգ տարիները
թատրոնի համար եղան բարե-
նպաստ՝ այն վերելք ապրեց: Մա-
կայն յետոյ երկրում տիրող սոցիա-
լական եւ տնտեսական ճգնաժամը
ազդեց նաեւ մեր թատրոնի գործունէ-
ութեան վրայ: Բեմադրութիւնների եւ
հանդիսատեսների քանակը զգալի
չափով նուազեց: Բայց մենք կարողա-
ցանք, մեծ ջանքերի շնորհիւ, արդէն
1995 թականին ոտքի կանգնել եւ
ստեղծել աւելի լաւ խաղացանկ: Այս-
պիսով, թատրոնը կրկին ընթացաւ իր

բնականոն հունով: Մենք ունեցանք
բազմաթիւ հիւրախաղեր: Անջնջելի է
մեր յիշողութեան մէջ 1995 թականին
Իրան կատարած այցելութիւնը: Դը-
րանից յետոյ անցած հինգ տարի-
ները մեզ համար եղան՝ կարօտի
տարիներ: Իրանից մենք մեզ հետ
տարել էինք բազմաթիւ հանդիսա-
տեսների ջերմութիւնն ու բուռն
ծափահարութիւնները, ու փառք Աս-
տղծոյ՝ մեր երազանքը դարձաւ իրա-
կանութիւն: Մենք կրկին այցելեցինք
Իրան: Եւ ի տարբերութիւն նախորդ
այցելութեան, այս անգամ մենք ոչ
միայն ունենք լաւ եւ ջերմ հանդի-
սատես , այլ նաեւ ընկերներ, բարե-
կամներ, որոնց հանդիպելու համար
նոյնիսկ ժամանակ չենք ունենում:

Հ. Ի՞նչ առաքելութեամբ եւ ի՞նչ
առիթով էք Իրան ժամանել:

Պ. Առաքելութիւնը մէկն է՝ մեր ար-
ւեստով ծառայել՝ մեր ժողովրդին:

Հ. Իրանից բացի ո՞ր երկրներում էք
հիւրախաղերով հանդէս եկել:

Պ. Խորհրդային միութեան ժամա-
նակ այցելել ենք բոլոր հայաշատ
երկրներ՝ Վրաստան, Ադրբեջան,
Ռուսաստան, Բուլղարիա, Հարաւ-
րալսիա եւ ...



Հ. Նախկինում Ձեր թատրոնը հա-
մարել է լաւագոյն թատրոններից մե-
կը, այժմ դա այդպէ՞ս է, թէ ոչ:

Պ. Նախկինում լաւագոյն համար-
ւելու համար կազմակերպում էին
փառատօններ, սակայն այսօրայ
պայմաններում դա չկայ, բացի այդ,
այսօր մեր ժողովուրդը գտնում է
միութեան անբարար պայման-
ներում, որը եւս իր հերթին հար-
ւածում է թատրոնին: Մի բեմադրու-
թիւն ներկայացնելու համար նիւթա-
կան լուրջ միջոցներ են պահանջու-
մ:

Հ. Բացի միութեան դժարութիւն-
ները, ուրիշ ի՞նչ խոչընդոտներ ունէք:

Պ. Բոլոր խոչընդոտները, դժարութի-
ւնները յաղթահարում են միայն
դրամով, եւ ընդհանրապէս ամէն ինչի
հիմքը դրամն է: Մնում է յուսալ, որ

Հայաստանը մշակութապես վերելք ապրի՝ իր բոլոր բնագավառներում:

Հ.- Ներկայումս ձեր թատրոնը ունի՞ իր մշտական հանդիսատեսը:

Պ.- Այո, սակայն քանակը տատանողական է: Վերջերս սոցիալական հարցում անցկացրեց բնակչության մեջ, հետևեալ հարցերին շուրջ, թե արդե՞օք ժողովուրդը յիշում է թատրոնում բեմադրած ներկայացումները, եւ արդե՞օք նա ցանկութիւն ունի՞ թատրոն յաճախելու: Հարցերի գերակշռող մասը դրական էր:

Հ.- Ի՞նչ բնույթի են այն բեմադրութիւնները, որոնք անելի շատ են հետաքրքրում հանդիսատեսին՝ Հայաստանում:

Պ.- Այս հարցն են կը ցանկանայի ընդհանրացնել, ներգրաւելով իրանահայ հանդիսատեսին եւս: Ընդհանրապէս արդի հանդիսատեսը ցանկանում է դիտել կենցաղային կատակերգութիւններ, դասական ըստեղծագործութիւնները անելի բարդ են ընկալում հանդիսատեսի կողմից, որովհետեւ հանդիսատեսը ստիպւած է անելի շատ մտածել: Եւ այս փաստը հաշիւ առնելով մենք ստիպւած ենք մատուցել այն, ինչ որ հետաքրքրում է մեր հանդիսատեսին, եւ նոյնը հաշիւ կառնենք մեր յաջորդ այցելութեան ժամանակ:

Հ.- Ձեր յետագայ ծրագրերը, որո՞նք են:

Պ.- Վերջին տարիներին աշխատանքային դադարի հետեւանքով, մենք ունեցանք ստեղծագործական ուժերի կորուստ: Մեր առաջիկայ ծրագրերի մէջ է մտնում թատրոնի ըստեղծագործական ուժերի համադրումը: Այս նպատակով մենք պէտք է նոր սերունդ դաստիարակենք: Թատրոնի սերնդափոխութիւնը պէտք է ապահովի, որպէսզի կրկին աշխատանքների աշխուժացումը վերսկսի:

Հ.- Արեստը Ձեր անձնական կեանքին խոչընդոտում է, թե՞ ոչ:

Պ.- Չի կարող խոչընդոտել նիւթական իմաստով, իսկ ընդհանրապէս մեր անձնական կեանքին այն նրպաստել է: Արեստը ցանկացած դերասանին, բեմ դուրս գալու պահին, մտացութեան է տալիս անձնականը եւ նա ընկնում է ուրիշ մի աշխարհ ու չի յիշում ոչ մի հոգւ, ոչ մի անձնական խնդիր՝ ապրելով բեմական կեանքով:

Հ.- Մի տեսակէտ կայ, որ ասում են արեստագէտ մարդու հետ ապրելը դժար է, հարցս այս խնդրին է վերաբերում:

Պ.- Իրօք, դժար է: Ըստ դէպքեր են գրանցել, երբ ամուսիններից մէկը եղել է արեստագէտ՝ համատեղ ամուսնական կեանքը երկար չի տևել: Արեստագէտի հոգեբանութիւնը հասկանալը դժար է, նրա աշխատանքի բնույթին յարմարելը եւս դժար է: Բայց իհարկէ կան ընտանիքներ, որտեղ հակառակն է լինում:

Հ.- Ձեր պատգամը իրանահայերին:

Պ.- Իրանահայերին, այս երկու այցելութեան ընթացքում, կարելի է ասել, որ որոշ չափով ճանաչել ենք: Լաւ մարդկանց շատ ենք հանդիպել: Իմ միակ ցանկութիւնը նրանց համախմբումութիւնն ու միասնականութիւնն է, կուսակցութիւնները թող լինեն, խօսքս դրան չի վերա-



բերում, մենք բոլորս պէտք է ծառայենք մէկ նպատակի՝ մեր ժողովրդի գոյատեւմանն ու բարգաւաճմանը: Օրինակ մեզ Թեհրան է հրաւիրել «ԲաՖՖի» մարզամշակութային միութիւնը, միւս միութիւնները նոյնիսկ այս հանգամանքին մօտեցնում են զաղափարական սահմանումներով: Արեստը կուսկցութիւն չի ճանաչում, այն համաժողովրդական է, մենք եկել ենք մէկ առաքելութեամբ՝ ծառայել ընդհանուր իրանահայ ժողովրդին: Մեզ պէտք է, իմ կարծիքով, մէկ միութիւնից միւս միութիւն հրաւիրեն, որպէսզի հայ հանդիսատեսը առնչւեր հայ արեստի հետ, առանց որեւէ կուսակցական մօտեցման: Միութիւններ կան Թեհրանում, որոնք անելի շատ հայութիւն են համախմբում, հետեւաբար անելի մեծ քանակութեամբ հայեր հաղորդակից կը լինեն մեր ազգային արեստին:

Օգտւելով առիթից՝ ցանկանում են իմ խորին շնորհակալութիւնը յայտնել «Լոյս» երկշաբաթաթերթին սի-



րալիւր ընդունելութեան եւ հարցազրոյցի համար: Ցանկանում են իմ խորին շնորհակալութիւններն յայտնել նաեւ «ԲաՖՖի» մարզամշակութային միութեանը եւ յատկապէս պրն. Արմէն Փիրամզադեանին՝ այս ազգանպաստ նախաձեռնութիւնը կազմակերպելու առթիւով:

Հարցազրոյցը վարեց Վաչիկ Վարդանեանը



ՏԻՐՈՒՆԻ

Լոյս երկշաբաթաթերթը իր ցուակցականներն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

1. Սրբուհի Խլղաթեան
2. Անահիտ Աբնուսեան
3. Հրայր Աբնուսեան
4. Սոկրատ Օհանեան
5. Արամայիս Ղազարեան

ԲԾՉՍԶԹՉՍ

ԼձԾՁԲՏ

ՊԾՁՕՍՕԾԲ ԾԲԵՁՕԲԲԵՐՍ

Անդրանիկ Խչումեան

Էջ առ էջ թերթերով եւ կարդալով «Իրանահայ դարավերջի գրողներ» գիրքը՝ ուրախութիւն եւ իջնում վրաս, որ առիթ եմ ունեցել ծանօթանալ մեր գրողներին, որոնցից շատերի անունը անգամ չէի լսել: շատ ժողովածուի հրատարակումը, իհարկէ մեծ գործ է, բայց ցաւալի է այն փաստը, որ բացակայում են բազմաթիւ գրողների անուններ, որոնք անկախ իրենց գաղափարների յետապնդումից, այնուամենայնիւ Իրանահայ գրականութեան մէջ մեծ աւանդ են թողել: Նրանց թում կարելի է նշել Խաչիկ Խաչերին, Հովիկ Էղգարեանին, Փանոս Վարդանեանին, Ազատ Մաթեանին եւ յատկապէս Գալուստ Խանենցին: Ուզում եմ ենթադրել, որ վրիպում է տեղի ունեցել, բայց դժար է այսպէս հեշտ ինքնահամոզմունք տածելը, իսկ մի գուցէ, Աստած չարասցէ, ինչոր թայֆայական եւ գաղափարական նեղմտութիւն է սա, ոչ չի կարող պատահել, չեմ կարողանում կրկին դիւրահաւատ լինել, քանզի ինչպէս է կարելի գրականութեան մէջ անտեսել Գ.Խանենցին, որը դեռեւս 1927 թւա-կանից սկսած աշխատակցել է հայ մամուլին՝ «Նոր էջ» գրական խմբակցութեանը: Նա եղել է համանուն հանդէսի հիմնադիրներից մէկը, յետագայում նաեւ հանդիսացել է «Իրանահայ գրողների միութեան» հիմնադիրներից, իսկ 1961-1966 թթ.-ին պաշտօնավարել է միութեան փոխնախագահութիւնը: Նա նաեւ, թեքանահայ «Գ շրջանակի», «Հանդիպում» անւան պարբերականի հիմնադիրներից էր: 1986 թ.-ին Գ.Խանենցը՝ Հայաստանի գրողների միութեան պաշտօնական հրատարակ, մասնակցել է նրանց 9-րդ համագումարին: Նոյնիսկ Խանենցի մասին ակնարկ է գրել Հայաստանի գրողների միութեան «Նոր դար» ամսաթերթի՝ 1998 թ.-ին լոյս տեսած երկրորդ



համարում: Իսկ Արփի Ալեքսանդրը լինելով «Նոր դար»-ի Թեքանի հիմնադրամի գործադիր անդամներից եւ «Իրանահայ գրողների միութեան» վարչութեան անդամ՝ պաշտպանելով դրա փոխնախագահութիւնը՝ միեւնոյն ժամանակ նկատի ունենալով նաեւ այն, որ «Իրանահայ դարավերջի գրողների» գրքի խմբագրական կազմում է, այդ դէպքում հարց է ծագում, թէ Իրանահայ գրողների միութեան փոխնախագահը ինչպէս է կարող անտեսել «Նոր դարում» տրւած տեղեկութիւնները: Եւ այս ամէնը գիտակցելով Իրանահայ գրողների միութիւնը ինչպէս է կարողանում մեծ սխալ թոյլ տալ, այս հարցին պէտք է պատասխանի ոչ միայն միութեան նախագահ՝ յարգարժան Վարանդը, այլեւ ողջ միութեան կազմը:

Հիմա անդրադառնանք վերոյիշեալ գրքի գրողներին, որոնք պարտաւոր էին հարցնել, թէ ինչո՞ւ է անտեսել իրենց միութեան հիմնադիրներից մէկի անունը: Սիրելի Վարանդը եւ իր գործընկերները, պէտք է հաշիւ առնեն այն փաստը, որ եթէ այսօր իրենցից ոմանք համարում են Հայաստանի գրողների միութեան անդամ, ապա դա մայր հայրենիքի գրողների մեծահոգութեան եւ երախտագիտութեան շնորհիւ է, եւ ինչո՞ւ մեր գրողների միութիւնը նոյնպէս չվարենք: Ի վերջոյ, քիչ թէ շատ, իրանահայ գրականութեանը աւանդ թեքած մարդկանց նկատմամբ: Արդե՞՞օք դուք առաջնորդում էք այն գաղափարով, որ միայն նա է համարում իրանահայ գրող, ում գոր-

ւածքները լոյս են տեսնում «Ալիք» օրաթերթում:

Սիրելի Վարանդը եւ իր գործընկերները պէտք է հաշիւ առնեն նաեւ այն հանգամանքը, որ եթէ որեւէ մի տեղ լուսաբանի իրանի Ֆիլմարւեստը, արդե՞՞օք կարելի է անտեսել Սամուէլ Խաչիկեանին, Արմանին, Վարուժ Զարին Մասիհիին եւ... Ուրեմն ինչպէ՞ս է իրանահայ գրողների միութիւնը կարողացել անտեսել իր հիմնադիր անդամին՝ գուցէ Խանենցի «մեղքը» նրանում է, որ մինչեւ իր կեանքի վախճանը նա գործակից է կանգնել հայրենիքին, եւ երեւի, այս մօտեցումն որոշ մարդիկ չեն հաւանել եւ նրանք են պարտաւորել իրանահայ գրողների միութեանը, որպէսզի Խանենցը անտեսի: Գրողների միութիւնը պէտք է հեռու մնայ խմբակցական նեղմտութիւնից, այն պիտի անդրադառնայ մեր համայնքում եղած բոլոր գրողներին՝ անկախ նրանց գաղափարական պատկանելութիւնից: Ժողովուրդը ակնկալիքներ ունի գրողներից: Գրողները մեր համայնքում ծագած խնդիրներին պէտք է մօտենան մտաւորականներին յատուկ մտայնութեամբ, յատկապէս այսպիսի մեծ արտագաղթի պայմաններում՝ որոնք առկա են եւ՝ Հայաստանում, եւ՝ Իրանում:

Սիրելի եւ յարգելի իրանահայ «Գրողների Միութեան» անդամները հարկ է գիտակցեն, որ անմաստ է խեղաթիւրել իրականութիւնը, քանզի ժողովուրդը այսպէս, թէ այնպէս տեղեակ է դրան, եւ այն կարող են լուսաբանել ներկայումս իրանահայ համայնքում լոյս ընծայող այլ թերթերը (բացի «Ալիք» թերթից): Եթէ չէք ցանկանում դառնալ Իրանահայ «որոշ» գրողների միութիւն, ապա սթափւեք եւ կատարեք ձեր իսկական առաքելութիւնը, այն է՝ ժողովուրդականութիւնը, մարդասիրութիւնը, համերաշխութեան սերմանումը եւ ճշմարտութեան ջատագովութիւնը: Ճշմարտութիւնը արեւ է, որը այնուամենայնիւ, պէտք է ծագի՝ թողնելով մութ ամպերն իր հետեւում:

تعمير گاه الكترو گارانتی

Շինականը



*Վիլիամ Սարոյեան
Թարգմանեց՝
Շահն Յարութիւնեանը*

Մի մարդ կար Սարգիս անունով, որն երեսուն տարեկանում Ամերիկա էր եկել Գալտիկ գիւղից: Նա մի խոշորակազմ շինական էր՝ խիտ, հաստ մազերով, փարթամ բեղերով: Կշռում էր շուրջ 200 ֆունտ, սակայն գէր չէր և մի արտասովոր մեկամաղձոտ արտայայտութիւն ունէր: Նա ազդեցիկ մարդ չէր եղել Գալտիկում, բայց շատ լաւ էր ապրել և շատ ընկերներ ունեցել՝ հայեր, քրդեր, արաբներ, հրեաներ, յոյներ, Բուլղարացի, շատ ուրիշ ցեղեր և ազգեր: Դրանց հետ նա խօսել էր հայերէն, քրդերէն, թուրքերէն, արաբերէն, Փոքր Ասիական այդ մարդկանց հետ և երբ հեռացել էր Գալտիկից, շատ բարեկամներ էր թողել իր գիւղում:

Նա Նիւ-Եորք հասաւ 1908-ի մայիսին:

Շատ տխուր մի վայր էր, և մէկը չկար հետը խօսէր:

Նիւ-Եորքում, 1908-ին շատ քչերը կային, որ երեք բառ հայերէն, քրդերէն, թուրքերէն կամ արաբերէն խօսել կարողանային: Շատ մենակ էր:

Գնաց Մասաչուսեթսի Լին քաղաքը և աշխատանքի մտաւ կօշիկի գործարանում, ու սկսեց փոքր ինչ անգիւրէն սովորել:

Խիստ դժարին աշխատանք էր նրա համար: Մի գործ չէր, որ մարդ իր ոտքերով ուսերով, եւ իրանով կատարէր՝ զայրոյթ պատճառով մի գործ էր, մատների և բազկի մէկերկու մկաններով եւ աչքերով:

Մէկ տարի աշխատեց կօշիկի գործարանում և մենակութեան ըզզացմունքը աւելի մեծացաւ: Լինում մի քանի հայ ընտանիքներ կային, սակայն չէր հաւանում նրանց՝ նման չէին Գալտիկի մարդկանց:

Մի գիշեր հարբեց, և մի հայ քահանայ նրան գտաւ փողոցներում երեքալիս: Միասին գնացին քահանայի տունը:

-Չաւակա, ասաց քահանան, -Ի՞նչ խնդիր ունես:

-Մենակ եմ, -հառաչեց շինականը:
-Աստուած քո հայրն է,- ասաց քահանան:

-Այդ բոլորը շատ ճիշտ,- ասաց շինականը, -Բայց Հայրիկ՝, մենակ եմ, մէկը չկայ, որ հետը խօսեն: Գալտիկում ճանաչում էի բոլորին, քրիստոնեայ, թէ հեթանոս մէկ է: Ահ, Հայրիկ, որքան քաղցր էր կեանքը Գալտիկում:

-Պիտի ամուսնանաս,- ասաց քահանան:

Շինականն ասաց.- Ճիշտ է, մի գեղեցիկ կին գտիր ինձ համար, որ ճաշ եփի և հայերէն ու առնագն մէկ այլ լեզու կարողանայ խօսի, քրդերէն, թուրքերէն կամ արաբերէն և կամուսնանամ:

Քահանան նրան տարաւ և անկողին դրեց ու մէկ շաբաթ անց շինականը նամակ ստացաւ քահանայից, որը մի քանի անգամ ընթերցեց: Քահանան նամակում գրում էր, որ մի լաւ աղջիկ է գտել շինականի համար և ուզում էր, որ նա շատ շուտ այցելի իրեն: Շինականը յիսուն անգամ կարդաց նամակը: Շատ երկար նամակ չէր:

Հազաւ իր լաւագոյն զգեստները և զնաց քահանայի տուն:

-Հայրիկ,- ասաց նա,- Եփ ու թուխ գիտի՞, այդ եմ ուզում իմանալ: Եփ ու թուխ գիտի՞: Այս մարդկանց կերակուրներով խենթացել է ստամոքսս: Աղջիկը եփել-թխել կարո՞ղ է, երգել կարո՞ղ է: Չեր տա՞նք է Հայրիկ:

-Ոչ որդիս, իմ տանը չէ,- ասաց քահանան,- Մենք ենք զնալու նրա տունը:

Մէկ մղոն քայլելուց յետոյ հասան այն տանը, որտեղ ապրում էր աղջիկը: Նա, աւելի շուտ տգեղ էր քան...

Շինականը կանգնեց տան մէջ, սիրտը բեկւած, կեանքում ունեցած այդքան փորձութիւններ Գալտիկի կորուստը, բազմաթիւ բարեկամների կորուստը, կօշիկի գործարանի անկարգ աշխատանքը, մենակութիւնը, լաւ ուտելիքների կարօտը, յարմար մէկի կարիքը, կարիքը բարի ու գեղեցիկ մէկի, որը երգի իր համար, իսկ յետոյ այս կինը՝. հայ, վտահաբար, ազնիւ բնատրոթեան տէր, առանց որևէ կասկածի, հաւանաբար գեղեցիկ, զուցէ և ասել թելի վարպետ, բայց այդ բոլորով համոզեմ..., ո՛չ նա չէր ուզում, չէր հաւանում, առաւել մենակ կը զգար իրեն:

*Տեքիայը

Մի ծխախոտ հանեց գրպանից և լուցկին վառելով գոչեց.- Հայրիկ, ներիր ինձ:

-Գլխարկդ դիր ահա այստեղ, ներս գնանք մտենք: Նրա անունը դեռ չեմ ասել, Էլիզաբ Իսկանդարեան է:

Շինականը գլխարկը վայր դրեց և ծուխը ներս քաշեց լիաթոք:

-Այո,- ասաց.- Այդ է իր անունը Հայրիկ, ընդունում եմ ասածդ: Պատիւ ունեմ.- ասաց դառնալով կնոջ կողմը:

-Ծանօթանալու ես իր հօր ու մօր հետ,- ասաց քահանան- սքանչելի մարդիկ են:

-Հասկանում եմ, Հայրիկ, իսկապէս որ լաւ մարդիկ են, ինչպէս ինքնին հաստատում է այս սեմեակը: Մի վայրկեան իսկ չեմ կասկածում, ընդունել, որ առաջին կարգի մարդիկ են:

Ծուխը խորն շնչեց, կրկին նայեց կնոջը և ասաց.- ստուգապէս առաջին կարգի: Ներիր ինձ, Հայրիկ:

Աղջկայ հայրն ու մայրը եկան շինականին տեսնելու՝, հարցրին անունը:

-Սարգիս Խաչատրեան, Գալտիկից, հայրենիքի գրկից կտրւած: Տասնըրեք ամիս է, որ ապրում եմ Ամերիկայում: Անապատում կորած: Մի ստորուկ, քչառ ու մենակ մարդ եմ: Ներիր ինձ, Հայրիկ, որքան դաժան է կեանքը:

Աղջիկը թուրքական սուրճ եփեց, շատ վատ համ ունէր, երգեց շատ վատ հնչեց:

Շինականը մտեց աթոռին, Երկիրն երագելով:

Դուրս բերեց իր հսկայ ժամացոյցը և նայեց:

-Ներեցէք հայրենակիցներ, շատ ուրախացայ: Մեկնեմ պիտի:

- Աստուած ձեզ պահապան: Բարի գիշեր:

Քահանան տնից դուրս ելաւ նրա հետ:

-Է՛հ.- ասաց քահանան.- Ո՞նց էր:

-Հայրիկ,- ասաց շինականը.- Չեմ ասել որքան տխուր եմ, խորապէս... Նա լաւ կին է, լաւ սուրճ է եփում, ծայրը տղիակի ձայն լինի կարծես: Բայց, Հայրիկ, նա ինչ որ բան ունի, որն տխրութիւն է պատճառում ինձ: Ոչ, չէի ցանկանայ նրա հետ լինել միևնոյն տան մէջ, միևնոյն մահճում, Հայրիկ, մտահան արա ամբողջովին:

-Կը սովորես սիրել նրան- ասաց քահանան:

-Հայրիկ,- ասաց շինականը.- չեմ ուզում սովորել, ներիր ինձ, շատ դժբախտ մարդ եմ:

-Ժամանակի հարց է միայն.- ասաց քահանան,-մէկ- երկու շաբաթ, մէկ- երկու ամիս, մէկ-երկու տարի, մէկ մանկիկ, ապա մի ուրիշը և յետոյ ի՞նչ, կարգած ես, զուակներ ունես, տարիները կանցնեն:

-Ներիր Հայրիկ.- ասաց շինականը.- երախտապարտ եմ քեզ, բայց այն փոքրիկ բիծը... չէ՛, ոչ մի շաբաթ, ոչ էլ երկու: Բարի զիշեր Հայրիկ:

-Բարի զիշեր որդիս,- ասաց քահանան:

Կալիֆորնիայից մի հայ եկաւ Լին, ու մի երեկոյ Սարգիս Խաչա-տըրեանը հանդիպեց այս մարդուն մի սրճարանում և ռայի խնեց նրա հետ իսկ նա Սարգիսին պատմեց Կալիֆորնիայի մասին:

-Հայաստան է նորովի,- ասաց մարդը: Արևշող, որթեր, արօտավայրեր, ձիթենիներ, թզենիներ, առակներ, կովեր...

-Կո՞վեր, հայրենակից,- բացականչեց շինականը, ասացիր կո՞վեր:

- Հարիւրներով.- ասաց մարդը:

- Աստուած իմ,- ասաց շինականը,- կովեր:

-Եւ աշխատո՞ւք,- հարցրեց շինականը,- ի՞նչ բնոյթի աշխատանք:

-Ագարակային, վար ու ցանքի,- ասաց մարդը:

-Աստուած իմ, արևի տակ...,- մտածեց Սարգիսը:

-Իմ սիրելի հայրենակից, մերոնցից շատ կան Կալիֆորնիայում: Այդ է խնդիրը:

-Աստուած իմ, ուրեմն ես կերթամ Կալիֆորնիա,- ասաց շինականը:

Եւ այդպէս էլ արեց:

Կալիֆորնիա հասաւ օգոստոսին՝ հենց խաղող քաղելու օրերին:

Կօշիկի գործարանում աշխատելուց աւելի լաւ էր, սակայն ուներ նաև իր վատ կողմերը:

Քանոնների մեծամասնութիւնը մեկսիկացի էին, կամ ճապոնացի: Տարօրինակ մարդիկ էին: Նա խօսել էր ուզում, սակայն չկար մէկը, որ հասկանար իրեն: Ուստի պիտի աշխատէր և չխօսէր:

Գործը պարփակում էր ողկոյզը ցօռունի արմատից կտրելը և մի փայտե մատուցարանի վրայ դնելը, որ պիտի մնար արևի տակ և խաղողները չորանալով չամիչ դառնային: Խաղողի մի երեսը չորանալուց յետոյ, երկու բանտը որթերի շարքով գնալով վերցնում էին մատուցարանը և խաղողը շրջում մի երկրորդ մատուցարանի վրայ, որպէսզի արևը չորացնի միւս երեսը:

Հաճելի չէր այս աշխատանքը կատարել մի մեկսիկացու հետ, մի մարդ, որ խօսել չէր կարող:

Ողբալի բան էր մի քնի ժամով շարունակ մատուցարաններ շրջելը մի մեկսիկացու հետ:

Ողջ ամառը զբաղեց այդ աշխատանքով:Աշնանը հերկեց հողը, ճրիւղատրեց որթերը և կիրակի օրերը քաղաք գնաց, Մարիպոզա փողոցում գտնուող մի հայկական սրճարան, որտեղ ռաքի և սուրճ խմեց, սկամբիլ խաղաց և զրուցեց հայրենակիցների հետ: Նոր մարդիկ էին բոլորը, որոնց հանդիպել էր Կալիֆորնիայում:

Մի օր էլ, երբ շինականը սրճարանում էր, մի մտրդ մտաւ սրճարան: Այդ մարդը Արշակ Դոմբալեանն էր, որ եկել էր Գալտիկից: Արշակ Դոմբալեանը Սարգիս Խաչատրեանին զիտեր երկրից: Երկրում նրանք իրար հետ խօսել էին: Սարգիս համար շատ հաճելի էր Գալտիկից եկած այս մարդու հետ զրուցելը Ամերիկայում:

Իրար ձեռք սեղմեցին հանդիսատրութեամբ և գրեթէ արտասուեցին:

-Այս, եղբայր Սարգիս, ո՞նց ես,- ասաց Արշակ Դոմբալեանը:

-Ես լաւ եմ եղբայր Արշակ, իրապէս լաւ եմ, դու ո՞նց ես,- ասաց Սարգիսը ողբազին:

-Այս, ես շատ լաւ եմ, սիրելի եղբայրս,- ասաց Արշակը,- ինչպէ՞ս ես տեսնում Ամերիկան, հաւանո՞ւմ ես:

-Էհ, Ամերիկան,- ասաց Սարգիսը,- ո՞նց եմ հաւանում,ի՞նչ ասեմ: Գնարի և մատուցարաններ շուտ տուր ծանօթ-անծանօթների հետ: Ահ՛ա ամենը: Գնա-արի, գնա-արի: Ծանօթանծանօթ և մատուցարաններ շուտ տուր: Ինչպէ՛ս իմանանք ովքեր են նրանք, եղբայր: Ի՞նչ ազգից են, ո՞վ է կարող ասել:

Սարգիս Խաչատրեանը կին առաւ Կալիֆորնիա հասնելուց մէկ տարի անց: Կինը, Լինի աղջկանից աւելի ցածր ընտանիքից էր, սակայն աւելի թմրիկ, աւելի թուխ, աւելի գեղեցիկ: Այս աղջիկը մի տղայ բերեց յաջորդ տարում: Սարգիսը շատ աշխատեց և երեք հարիւր դոլար խնայեց, որպէս կանխավճար յատկացրեց տաս արտավար խաղողի այգում: Այժմ իսկապէս մի հողագործ էր: Չիւր ունէր, մէկ հաս կով ունէր, տուն ունէր, մի բարի կին և մի զուակ:

Ինչպէս ասել էր քահանան, մէկը դարձաւ երկու, երկուսը՝ երեք, երեքը՝ դարձաւ չորս: Օրեր, ամիսներ, տարիներ և երեխաներ: Իսկապէս, որ շատ լաւ էին այս բոլորը: Չէր կարող ասել, որ լաւ չէր, սակայն..., չգիտէր: Բար-

գաւաճում էր գործը: Յաւելալ դրամ վաստակելով, նոր տափեր գնեց, հերկեց, տնկեց, ճիւղահատեց, ջրեց, քաշեց: Տաս արտաստվոր այգիները աճեցին մինչև հասան երեսունի, ապա քառասունի, յետոյ՝ յիսունի:

Ու, մի նոր տուն շինեց Սարգիսը, էլեկտրական հոսանքով. մի գրամաֆոն գնեց, ատօ գնեց: Կնոջն ու երեխաներին քաղաք տարաւ՝ պաղպաղակ, սոդայաջուր խմելու, շարժանըկարի սրահ տարաւ նրանց: Տարիներն անցնում էին: Անդրանիկ որդին միջնակարգն աւարտեց, շինականը մատեց դպրոցի սրահում և տեսաւ տղայի վկայական ստանալը՝ աչքերը արտասուքով լցեցին: Ըստ գեղեցիկ էին այդ բոլորը: Գիտէր թէ որքան հոյակապ էին բոլորը: Անդրանիկ որդին ամուսնացաւ Կալիֆորնիայում ծնած մի հայ աղջկայ հետ: Որդին խաղողի մի փոքրիկ այգի գնեց իր համար և հարսանեաց հանդէսին իսկական հայկական, բուրբակաւ և քրդական երաժշտութիւն և երգ հնչեց: Պարեցին: Նրա երկրորդ որդին ոչ միայն միջնակարգն աւարտեց՝ այլ նաև Բլոկի գնաց և քուլեջ աւարտեց: Հոյակապ էր:

Սքանչելի էր այս բոլորը:Ճիշտ իր աչքերի առջև տեսած փոփոխութիւնը կեանքում՝ հեռախօսը, ատոն, տըրակտորը, փոշեծծիչը: Լացքի մեքենան, էլեկտրական սառնարանը, ռադիօն, իր տղաների և աղջիկների անգլերէն խօսելը, շատ բաներ սովորելը՝ պանծալի օրեր էին, պանծալի ժամանակներ:

Տխոր էր տակաւին: Չգիտէր: Գալտիկում աւելի լաւ էր: Մարդ գիտէր, թէ ում հետ է խօսում: Արաքը՝ արաք: Բուրդը՝ բուրդ: Թուրքը՝ թուրք: Մարդ գիտէր դէմքը, աչքերը, քիթը, նոյնիսկ հոտը: Տուն էր: Մարդ խօսում էր և գիտէր թէ ում հետ է խօսում. բայց ի՞նչ կար այդ Ամերիկայում: Երբեք չէր կարողանում մոռանալ, թէ ի՞նչ էր այդ Ամերիկայում:

Ժամանակ առ ժամանակ երևելի մարդիկ էին այցելում նրան արհեստավարժ մարդիկ: Ունայ-ունայ սուրճ խմելով հարցնում էին լաւ, հայրենակից, Ամերիկան հաւանո՞ւմ ես:

Եւ նա միշտ տխոր նայում էր ծանօթի դէմքին, ծանօթի աչքերի մէջ և ասում,- Ի՞նչ իմանամ, գնա, արի և մատուցարաններ շրջիր ծանօթ-անծանօթ կարդկանց հետ:



Արդեօք ձեր քունը լիարժեք է. ութ ժամեայ քունը նույնիսկ կարող է լիարժեք չլինել



Դոկտ. Վիլիամ Ս. Դեմենթ քարգմանեց՝ Վիոլետ Ջուաքիմը (Բեշիշեան)

Մի հիւանդ ունէի, որը անքնութեան պատճառով չափազանց ցրած էր, այն աստիճանի, որ օրերից մի օր նա կեղտոտ ամանները լամալու նպատակով, սխալմամբ դրանք ւրդել էր լածքի մեքենայի մէջ: Կարո՞ղ էք պատկերացնել, թէ ինչ կատարեց, երբ նա միացրեց լածքի մեքենան:



Մէկ այլ հիւանդ էլ ունենք: Նա երկար ժամանակ ցանկանում էր ներկայ գտնուել մի հետաքրքիր համերգի: Բայց այդ ելոյթից մի քանի րոպէ էր միայն հաճոյք ստացել, իսկ մնացած ժամանակահատուածում նա քնած էր եղել:

Այն մարդիկ որոնք լիարժեք քուն չունեն անօրեայ կեանքում, նրանք շատ սխալներ կարող են թոյլ տալ: Յաճախ նրանք վէճերի մէջ են ընկնում, վիճում են իրենց ընտանիքի անդամների, գործընկերների հետ: Նրանց կողմից թոյլ տրուած սխալները երբեմն անդառնալի են վտանգաւոր են լինում: Օրինակ՝ աստօվաբար:

Ոչ լիարժեք քնելու դէպքում պարտք էք մնում ձեր ուղեղին

Սովորաբար չափահաս մարդիկ ամէն գիշեր պէտք է 8 ժամ քնեն: Իհարկէ, դա ամէն մարդու չի վրաբերում: Մէկը քնում է աւել շատ, միւսը՝ աւելի քիչ: Երիտասարդները եւ երեխաները աւելի 10 ժամ քնելու կարիք ունեն: Ուղեղը իր մէջ Ֆիկսում է քնելու պահանջը, որը պէտք է անպայմանօրէն լրացի: Եթէ ձեր քունը մէկ գիշերայ ընթացքում կարճատեւ է լինում, յաջորդ օրայ ողջ ընթացքում քնելու պահանջ էք զգալու: Եւ եթէ շարունակուած է 5

օրայ ընթացքում, ապա դուք 10 ժամ պարտք էք մնում ձեր ուղեղին որպէսզի լրացնէք կամ վճարենք մեր պարտքը պէտք է քնենք մինչեւ ժամը 17:00-ը: Սակայն որոշ մարդիկ երկար քնելու ընդունակ չեն լինում, որովհետեւ մարդու օրգանիզմը ունի իր կենսաբանական ժամացոյցը:

Արթուն, բայց ոչ կազդուրած

Մարդու օրգանիզմում կայ մի հիւանդի կենսաբանական ժամացոյց, որը սահմանում է նրա քնելու եւ արթնանալու ժամերը: Այս զարմանալի հանգամանքը պատճառ է դառնում որպէսզի մարդը քանի րոպէ աւելի շուտ արթնանայ իր կողմից նախատեսուած ժամից:



Քնել եւ առողջ լինել

Ինձ յաճախ հարցնում են, թէ ի՞նչ է պատահում այն մարդկանց, որոնք տարիների ընթացքում քնելու կարիք են ունենում: Այդ երկար ժամանակահատուածը մենք չենք ուսումնասիրել, այլ ուսումնասիրել ենք միայն երկու շաբաթայ ընթացքը: Եթէ դուք այդ ընթացքում հիւանդացել էք եւ ճարահատուած՝ երկար քնել, ապա դա լրացրել է նախկինում եղած քնելու պահանջը: Կամ էլ ձեր ուղեղը կորցրել է քնելու պահանջի կանոնադրումը: Ուսումնասիրութիւններից մէկի ժամանակ պարզուել է, որ այն մարդիկ, որոնք Վլեց տարայ ընթացքում եօթ ժամից պակաս են քնել, նրանց կեանքը կարճատեւ է լինում: Սակայն նրանք, ովքեր ութ ժամ են քնել, ընդհակառակը, երկարակեաց են: Մէկ այլ ուսումնասիրութիւն էլ ցոյց է տուել, որ 10 ժամ քնելու դէպքում էլ մարդու կեանքը երբեմն կարող է կարճատեւ լինել: Նրանք երկար քնելու հետեւանքով կարող են հիւանդութիւններ ձեռք բերել: Օրինակ՝ հիւանդութիւններից մէկի ժամանակ մարդու շնչառութիւնը 10 վայրկեանով կանգ է առնում, եւ դա

մէկ գիշերայ ընթացքում, հաւանաբար, կրկնում է 100 անգամ: Ինչպէս տեսնում ենք անկանոն քունը կարող է լուրջ առողջական խնդիրների առջեւ կանգնեցնել: Այսպիսով, վճարելով ձեր քնելու պարտքը ուղեղին, կարող էք ապրել աւելի ուրախ, աշխոյժ եւ առողջ:

Իւրացնենք լիարժեք քնելու սովորութիւնները

Սովորաբար մենք ինքներս չենք կարող դատել, արդե՞օք քունը կանոնաւոր է, թէ՛ ոչ: Կամ մարդիկ, որոնք քնելու պահանջ ունեն, սակայն իրենց թում է, թէ լիարժեք են քնում: Բայց երբ նրանց խորհուրդ տւեցինք գիշերները 8 ժամ քնել, այն կիրառելով, նրանք ամէն առաւօտ աւելի կազդուրած էին արթնանում: Մարդը, որի օրգանիզմը վաղուց չի հանգստացել եւ ունի քնելու պահանջ, չի կարող մէկ գիշերայ ընթացքում այն բարարարել: Ուրեմն լիարժեք քուն ունենալու համար, կատարել հետեւեալ քայլերը:

1. Մէկ գիշերայ ընթացքում ճշտենք, թէ քանի՞ ժամ ենք քնելու եւ ո՞ր ժամին:
2. Մի քանի գիշեր, նոյն ժամին կանոնաւոր քնելով՝ ուշադրութիւն դարձնենք մեր ինքնազգացողութեանը:
3. Եթէ աշխոյժ չէք, ուրեմն անելացրէք ձեր քունը 15-30 րոպէով: Սակայն եթէ նոյնը կրկնուի՝ կարելի է նորից մի քանի րոպէով աւելացնել:
4. Իւրաքանչիւր օր՝ միննոյն ժամին, թուրթիւն գալով, պէտք է հասկանաք, որ ձեր քնելու ժամն է:

Իսկ եթէ քնելու հետ կապուած որեւէ դժարութիւններ ունենաք՝ անպայման դիմէք բժշկի օգնութեանը:

Շեռախօսազանգ


Այօ՞, «Լոյս» երկշաբաթաթերթ: Լսում եմ ձեզ: Կամենում եմ անվերապահօրէն շնորհակարտել Ձեզ՝ «Լոյս» երկշաբաթաթերթի խմբագրական կազմին եւ նրա բոլոր աշխատակիցներին, այդ ազգամեր առաքելութեան համար: Արդարեւ «Լոյս»-ը ծառայում է համայնքի բոլոր խաւերին, մասնաւոր որ հրատարակուած է մեսրոպեան ուղղագրութեամբ:

Մի ընթերցող

Հարցազրույց Մարգար Ներսիսեանի հետ

Իրանահայ շնորհալի եւ տաղանդաւոր Ֆուտբոլիստների շարքին է պատկանում՝ Թեհրանի «Արարատ» թիմի նախկին Ֆուտբոլիստ (այժմ մարզիչ) Մարգար Ներսիսեանը: Նա միշտ հաւատարիմ մնաց «Արարատ»-ին եւ իր մասնակցութեան տարիներին, թէկուզ բազմաթիւ առաջարկներ եղաւ Իրանական այլ թիմերից, սակայն նա կառչած մնաց իր սրկըզբունքին՝ չլքել հարազատ թիմը:

Մեր թղթակիցը մի փոքր զրոյց է ունեցել նրա հետ, որը ստորեւ ներկայացնում ենք:



Հարց. Խնդրում են ներկայացնել՝ **Պատասխան.** Ծնել եմ 1957 թականին: Ֆուտբոլ սկսել եմ խաղալ 12 տարեկանից՝ Միփան միութիւնում: Գորս տարի Միփան միութեան պատանեկական թիմի անդամ եմ եղել: Այնուհետեւ հրախրել եմ «Արարատ»: Նախ ընդդիմել եմ Արարատի պատանեկական խմբում, ապա մեծերի կազմում եմ մասնակցել անցկացած բոլոր մրցոյթներին: Այդ մրցոյթների շարքում երեւի ամենակարեւորը Իրանի «Թախթ Չամշիդ» անուամբ զաւաթի մրցոյթներն էին: Այս ամենից յետոյ մօտ չորս տարի

«Արարատ» պատանեկական եւ մանկապատանեկական թիմերի մարզիչն եմ եղել:



Մարգար Ներսիսեանը «Արարատի» կազմում (կանգնածների շարքում - աջից երկրորդը):

Հ. Ո՞ր գծում եք խաղացել:
Պ. Հիմնականում եղել եմ վերջին պաշտպան:

Հ. Ո՞վքեր են եղել Ձեզ հեմարանն այս ուղին անցնելու համար:
Պ. Մայրս ու իմ ընկերներն են եղել միշտ իմ կողքին եւ օգնել ինձ:

Հ. Ի՞նչ կարծիք ունեք իրանական Ֆուտբոլի մասին:
Պ. Ինչ վերաբերում է իրանական Ֆուտբոլին, ապա իմ կարծիքը դրական է: Իրանական Ֆուտբոլը վերջին տարիներին որոշակիօրէն, կարելի է ասել, որ իր տարեքի մէջ է: Մակայն, առանց չափազանցման, որպէսզի այն իսկապէս հասնի բարձր մակարդակի, մեր Ֆուտբոլիստներից պահանջում են ատելի մեծ ջանքեր, մարզական մեծ պատրաստամտութիւն եւ, որ ամենակարեւորն է, ցանկութիւն՝ հասնելու առաւելագոյն արդիւնքի:

Հ. Ֆուտբոլը ի՞նչ ազդեցութիւն է ունեցել ձեր անձնական կեանքում:
Պ. Ֆուտբոլը դրական մեծ ազդեցութիւն է ունեցել իմ կեանքում՝ թէ Ֆիզիքապէս, թէ՛ հոգեպէս: Ես նրանով ապրել եմ, այն ինձ պարզել է առողջութիւն, որոշակի կեցածք, բարձր տրամադրութիւն: Եւ օգնել՝ յաղթահարելու իմ կեանքում եղած բոլոր դժկարութիւնները:

Հ. Ձեր կարծիքով ո՞վքեր են համարում լաւ Ֆուտբոլիստներ:
Պ. Լաւագոյններից, յատկապէս, աչքի են ընկել՝ Մարգար Աղաջանեանը, Ջաւադ Չարինչէն, Մահապիքիան՝ Իրանում: Իսկ արտասահմանում՝ Ռիվալդոն եւ Շեյնեկոն:

Հ. Ձեր ցանկութիւնը մեր ժողովրդի ապագայի վերաբերեալ:
Պ. Իմ պատգամը հետեւեալն է. մեր ժողովուրդը՝ իր հնարատրութեան սահմաններում, ամէն կերպ պէտք է սատար կանգնի մեր բոլոր միութիւններին, քանի որ մենք Իրանում փոքրամասնութիւն ենք կազմում: Մենք պէտք է լինենք մէկ ընտանիքի մասն, պաշտպանելով եւ սիրելով միմեանց, ինչը կը նպաստի հայրենասէր եւ լաւ սերունդ դաստիարակելու գործին:

Եւ օգտուելով առիթից՝ ցանկանում եմ իմ խորին շնորհակալութիւնը յայտնել «Լոյս» երկշաբաթաթերթին՝ իր թանկագին էջը եւ ժամանակը մեզ տրամադրելու կապակցութեամբ:



Մարգար Ներսիսեանը (կանգնածների շարքում - աջից երրորդը):

Հարցազրույց վարեց՝
Ռոբերտ Վարդումեանը

Սկիզբը 23-րդ էջում

Նախշերը՝ ինչպէս պատաստի վրայ, եթէ շարունակւում են մինչև անորոշութիւն, նշանակում են, որ Ձեզ համար էլ ձանձրալի է, հոգնել եք կեանքի ընթացքից և երազում եք փոփոխութիւններ, նոր զգացումներ, որոնք Ձեզ կը հանդէպեն, որ կեանքն անտեղի չէք վատնում: Մտածեք այն փոփոխութիւններ ունենալ մասին, որոնք Ձեր այդ գիտակցումը և կեանքը կը դարձնեն հետաքրքիր:

Խաչերը նշանակում են, որ Դուք ապրում եք մեղքի զգացում, մասնատրապէս հեռախօսային խօսակցութիւնից յետոյ:

Քառակուսիները, եռանկյունիները և երկրաչափական այլ Մարմիններ նշանակում են, որ Ձեզ հեշտու-թեամբ չեն խաթի: Դուք ունեք հստակ նպատակներ և հասնում եք դրանց իրականացմանը, չէք թաքցնում դրանք և չէք վախենում Ձեր հակառակորդներից:

Շախմատի դաշտ նկարելը նշանակում է, որ հոգեկան ծանր վիճակում եք և հարկ է ատելի բարեյաջող ուղի գտնել:

ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 2

Կազմեց՝
Կ.Տ. Յովհաննիսեանը

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Ատրպատականի հայոց մեծ առաջնորդ- ցուցական դերանուն:
- Անձնապաշտպան անհատ- ար- ինահոսող վերք:
- Կաշիկ աման- դեմքի մասերից- անուղղակի ասած խօսք:
- Մուսուլման ազգութիւն- տարեկից, տարեդարձ- արար:
- Հանդարտ, նուրբ- կրկնած բաղա- ձայն- արական անուն:
- Մեր նախապապը- իրօք, ճշմարիտ- Լատինական Ամերիկայի մայրա- քաղաքներից:
- Ճերմակի մաքրութեան խորհրդա- նիշը- քանիտրորդ:
- Կարողութիւն- անբնակ տարածք- աջից մակերեսի միաւոր- ձայնանիշ:
- Իրային տարածք- հագուստի կտոր, պատուածք- Ֆուտբոլի միջազգային Ֆեդերացիա:
- Մոված, քաղցած- տեղանունների վերջածանց- պաշտօնական հագուստ:
- Որեւէ աղէտի տարածումը- կեղծ, արհեստական, սարքովի:
- Ժայռակտոր- պահեցողութիւն- երկինջիւն տառ- շաղկապ է:
- Հնում օգտագործւած հրազէն- տեղեակ:
- Բարբառական կախում- հարցական դերանուն- քարացած վիճակում աղ:
- Կոկորդ- փոխաբերական իմաստով աքսորավայր, տաժանակիր աշխատանքի տեղ- անձնական դերանուն:

1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															

**ԼՈՒԻՆԷ
ԽԱՉԲԱՌԸ**
**ՍՏԱՑԷՔ
ՍԻԵՐ**

Ուղղահայեաց

- Առանց արդիւնաբերական կենտրոնի իւրաքանչիւր երկրի ճարտարարւեստը կը գտնուի կախեալ վիճակում:
- Գերի- քանակական չափի միաւոր- կրկնութիւնը՝ թռչնածայն:
- Շների կերակրելու միջոց- հին պատի ժամացոյցի մէջ մետաղէ ձող՝ ծայրին ծանրոց:
- Յաճից՝ 3.14 թիւ անունը- թատերական հարթակ- շարաւ, ժահր:
- Էզ շուն- լայնարձակ, անսահման, անհուն- խիղճ:
- Առանց որի չար գոյութեան՝ ցաւօք սրտի հնարաւոր չէ պատկերացնել որեւէ երկիր կամ անհետ- չհունցւած կաւ...- շինանիւթ:
- Հիլէ (ուղղագրական սխալով)- անմիջապէս, արագ:
- Ինչ որ ընդգրկում է աչքերի տեսողութեան սահմանում- մարմնի գոյգ մասերից- որտեղ:
- Վերջը ցնդած գազ...- ազնուական ծագումով հեծեալ զինուորական- ստացական դերանուն- գրաբար՝ աշխիւքն:
- Արիւնատար անօթ- օժանդակ բայ- ձայնանիշ- առարկայ:
- Ուժից ընկած- հին ազգութիւն Միջագետքում- լոյս ժամանակ քայլում է մեզ հետ:
- Իգական անուն- հայ մեծանուն վիպագիր- անշատ:
- Որսի միջոցներից- արիւնախում:
- Կեսակ (օտար)- յատկանիշ:
- Թնդանօթի գնդակ- ծածկելու, թագցնելու գործողութիւնը- կրկնութիւնը՝ թռչնածայն:

**Խաչբառ համար 1-ի
լուծած տարբերակը
տե՛ս էջ 19-ում:**

Փամանց



Մայիս

Յիշո՞ւմ էք Դազարուս Աղայեանի « Ամիսներ և չորս եղանակ » բանաստեղծութեան սկիզբը.

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը՝ կապոյտ մանուշակ,
Մայիսին բացում է վարդը,
Խոխակն երգում անուշակ:

Այսպէս ամեն ամիս ունի իր ուրոյն « դիմագիծը » որոշող պատկերը, եթէ կուզէք՝ իր խորհրդանշիչը:

Մի կողմ բողոքներ, սակայն, անցած մարտն ու ապրիլը և գանք մայիսին: Հիմա « բացում է վարդը »: Մայիսը գարնանային փոքրումի, աշխատատրական տօնի բերկրանքի, հայ ժողովրդի և մարդկութեան Յաղ-բանակի ցնծութեան ըմբռնչման ամիսն է (յիշենք 451 թ. մայիսի 26-ը ... 1992-ի մայիսի 9-ը):

Իսկ հին՞ում:

Պարզում է, որ հին Հռոմում էլ են մայիսեան տօնախմբութիւններ և հանդիսութիւններ եղել: Դրանք կոչել են majus / մայուս / և այս բառին ինչքան մօտ է հնչում ռուսերէն մանովկա-ն, որով անուանում են Մայիսի 1-2-ի տօնական զբոսապտոյտները:

Միս գարնանային այս գարթ ամիսը հռոմէացիները կոչել են Majus /մայուս/, աւելի ամսողջական՝ Majus mensis / մայուս մենսիս /, այսինքն՝ « Մաեայի ամիս ». անգլերէն May / մէյ /, Ֆրանսերէն mai /մէ /, գերմաներէն Mai / մայի /:

Իսկ ո՞վ է այդ Մայան:

Այս անունով հռոմէացիները կոչել են երեք դիցուհիների՝ Ատլանս (Ատլանտ) աստծոյ և Պլտօնէ աստուածուհու դստեր՝ Մերկուրիուսի մօրը, եօթ քիւրդերից՝ պլւտոնից մէկին, ինչպէս նաև Ֆաունուս աստծոյ, ու Մարիկա յաւերժահարսի դստեր: Մակայն մայիս անուանունն աւելի շուտ կապւում էր այս վերջինի հետ, քանզի նա աստուածուհին էր գարնան, աճման ու բարգաւաճման, բեղմնատրութեան ու առատութեան:

Նման անանակոչութիւնը յատկանշական է նաև նրանով, որ սա առաջին դէպքն է, երբ ամսայ ճակատը պակտւում է գեղեցիկ սեռի ներկայացուցչի՝ կնոջ անունով, մինչ միսներից շատերը նիւրած էին այրերի յիշատակին՝ աստուածներ լինէին թէ պատմական իրական դէմքեր (որ կը տեսնենք քիչ յետոյ)

Եթէ հին Հռոմում 5-րդ ամսին գարուն էր, ապա Հայաստանում՝ խորունկ ձմեռ. այդ ամիսը համապատասխանում է հայոց անշարժ տոմարի դեկտեմբերի 9-ից յունւարի 7-ն ընկած ժամանակահատուածին:

Այս ամսին մեր նախնիները, խոնջացած ամառային ու աշնանային ծանր գործերից, փակւում էին ձիւնէ սաւանով պաշարած իրենց տներում և ուտում՝ ինչ որ ճարել ու պաշարել էին:

Իսկ նրանց անասունները, ձմեռային նոյնպիսի « բանտարկութեան » մէջ, զուգարուում էին. դրա համար էլ հայոց 5-րդ ամիսը կոչւում էր քաղոց, որ փաստօրէն նշանակում է « անասունների խառնից՝ զուգարութեան

(ամիս)»: Այս բառի արմատն է քաղ, դեռևս չստուգարանած մի արմատ, որ նշանակում էր թէ՛ « անասունների զուգարութիւն », թէ՛ « նոխազ, արու այծ », և կապ չունի քաղել բայի հետ:



Ժողովրդական ասածածքներ

Ամենալաւ իշխողը նա է, ով ինքն իրեն է իշխում:
Երբ շուն չկայ, խոզն էլ է հաչում:

Հումոր

Մէկը հարևանի հետ կուում է ու փորին խփում, վերջինս գոռում է՝

- Վա՛յ, մէջքս:
- Արա՛, ես քու փորին եմ խփում, դու գոռում ես՝ մէջքս:

— Բա որ մէջք ունենայի, դու փորիս կը խփեի՞ր:

— Առաւօտեան կինը դիմում է ամուսնուն.

Ամբողջ գիշեր չեմ քնել:

Ինչու՞:

Դու խռացնում էիր, իսկ շունը՝ հաչում էր:

— Մի՞թէ կը քնեիր, սիրելիս, եթէ ես հաչէի, շունը խռմփացներ:

Փաստեր

Ներկայումս աշխարհում տղամարդկանց թիվը 20 միլիոնով աւելի է, քան կանանց: Մակայն, ինչպէս վկայում են ժողովրդագիրները, 21-րդ դարասկզբին դուրսիւնը տալէս կը փոխի, և տղամարդկական առաջնութիւնը կը զիջեն կանանց, որոնք 175 միլիոնով կը գերազանցեն տղամարդկանց:

Օգտակար խորհուրդներ

Ժանգի կեղտաթծերը, եթէ նրանք թոյլ են, կարելի է մաքրել լիմոնի հիւթով, որով կեղտաթիծը մի քանի անգամ թրջում են և արդուկի կամ թեյամանի տաք կողքին կպցնելով ոչ շատ չեն չորացնում, որից յետոյ ջրով լւանում են:

Գուշակարան

Յաճախ առօրեայ կեանքում, ժողովներում, հեռախօսային խօսակցութիւնների ժամանակ, ձանձրոյթից, ազատ բոյլներին բոլորս էլ սկսում ենք երբեմն մաքուր թղթի վրայ տարբեր տարբեր գծել՝ սուր անկիւններ, ծաղիկներ, շրջանագծեր և այլն: Ըստ որում՝

Շրջանները, ալիքատր գծերը նշանակում են այլոց հիմնախնդիրներ, որոնք Չեզ բնաւ չեն անհանգրստացնում:

Յանցածն գծերը նշանակում են, որ դուք զգում եք դիակի կամ դժարին կացութեան մէջ Չեք ընկնելը: Այդ ցանցի իւրաքանչիւր հաստ գիծը լարած, յաղթանակող ճիչ է, քայլ, որ, ցատք, ճիշտ չէք անում և օր ըստ օրէ Չեզ դժբախտ եք համարում:

Մրտերի միացումը նշանակում է, որ դուք շատ զգացմունքներ ունեք և մի եղեք շատ սառը, արտա-յայտեցեք և Չեզ համար հեշտ կը լինի:

Շար. 21-րդ էջում